

Brot
für die Welt
Bread for the World-
Protestant
Development Service

ECOLUR
NEW INFORMATIONAL POLICY IN ECOLOGY

G-GREEN
Alternative



ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԵՎ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱՑՆԱՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Երևան - 2024թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.....	2
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ.....	4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	8
1. ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԹՒՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ.....	8
1.1. Ընդհանուր իրավիճակի նկարագրություն.....	8
1.2. Կլիմայական փոփոխությունների կանխատեսումները Հայաստանում.....	10
1.3. Կլիմայի փոփոխության միտումները թիրախ համայնքներում.....	10
1.3.1. Թալին համայնքի կլիման.....	10
1.3.2. Դիլիջան համայնքի կլիման.....	11
1.3.3. Եղեգիս համայնքի կլիման.....	13
1.3.4. Փամբակ համայնքի կլիման.....	14
2. ՀՀ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....	15
3. ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՓԱՐԻԶՅԱՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՎ ՀՀ ՍՏԱՆԶՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ.....	16
3.1. Ուսումնասիրված համայնքների գնահատում՝ «Էներգետիկա» ոլորտ.....	19
3.1.1. Բնական գազի սպառումը և դրա նվազեցմանն ուղղված կառավարության քաղաքականությունը.....	20
3.1.2. Հիդրոէներգետիկա.....	21
<i>Եղեգիս համայնք՝ փոքր հիդրոէներգետիկա.....</i>	22
<i>Փամբակ համայնք՝ փոքր հիդրոէներգետիկա.....</i>	23
<i>Դիլիջան համայնք՝ փոքր հիդրոէներգետիկա.....</i>	23
3.1.3. Արևային էներգետիկա.....	24
Թալին համայնքը՝ որպես արևային էներգետիկայի զարգացման կենտրոն.....	24
«Այգ-1» արևային ֆոտովոլտային կայանի մասին.....	25
3.1.4. Էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումներ համայնքներում 2022-2023թթ.	26
3.2. Ուսումնասիրված համայնքների գնահատում՝ «Արդյունաբերական պրոցեսներ և արտադրանքի օգտագործում (հանքային արդյունաբերություն և F-գազեր)» ոլորտ.....	30
3.3. Ուսումնասիրված համայնքների գնահատում՝ «Թափոններ (կոշտ թափոնների կառավարում, կեղտաջրեր)» ոլորտ.....	32
<i>Թալին համայնք՝ թափոն.....</i>	33
<i>Փամբակ համայնք՝ թափոն.....</i>	34
<i>Եղեգիս համայնք՝ թափոն.....</i>	35
<i>Դիլիջան համայնք՝ թափոն.....</i>	35
3.4. Ուսումնասիրված համայնքների գնահատում՝ «Անտառային տնտեսություն (անտառապատում, անտառների պահպանություն) և այլ հողօգտագործում» ոլորտ.....	36
3.4.1. Ապօրինի անտառահատումներ.....	37
3.4.2. Անտառվերականգնում.....	38
<i>Դիլիջան համայնք՝ անտառ.....</i>	39
<i>Փամբակ համայնք՝ անտառ.....</i>	40
<i>Եղեգիս համայնք՝ անտառ.....</i>	43
<i>Թալին համայնք՝ անտառ.....</i>	43
3.5. Հողային ռեսուրսներ.....	43
4. ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.....	45

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՊԱՕ	Արդյունաբերական պրոցեսներ և արտադրանքի օգտագործում
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԱՍԳ	Ազգային մակարդակով սահմանված գործողություններ
ԲԲՇ	Բազմաբնակարան շենք
ԳԱՏԱՀ	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում
Գգ	գիգագրամ (10 ⁹ գրամ կամ հազար տոննա)
ԳԷՀ	Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ
ԴԴՏ	Դիքլորդիֆենիլ
ԵՄ	Եվրոպական միություն
ԿԷԿԳԾ/SECAP	Կայուն էներգետիկ և կլիմայական զարգացման գործողությունների ծրագիր
ԿՓ	Կլիմայի փոփոխություն
ԿՓՀ	Կլիմայի փոփոխության հարմարվողականություն
ԿՓՇԿ	Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիա
կՎտ.ժ	Կիլովատտ ժամ
ՀԸԳՀ	Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր՝ ՀՀ և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև
ՀԱԷԿ	Հայկական ատոմային էլեկտրակայան
ՀԱԾ	Հարմարվողականության ազգային ծրագիր
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՎԵ	Հիդրոոդերևութաբանական վտանգավոր երևույթներ
համ.	համարժեք
ՀԷՑ	Հայաստանի էլեկտրական ցանցեր
ՀԾԿՀ	Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՈԱԿ	Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն
ՀՕ	Հայաստանի օրենք
ՀՖԱ	Հիդրոֆտորածխածին
ՀՔԷ-Ա	Հեպտաքլորէպօքսիդ
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԶԾ	ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր
ՄԶԳ	Միջազգային Զարգացման Գործակալության
ՄՎտ	Մեգավատտ
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՇՄՆ	Շրջակա միջավայրի նախարարություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՊՔԲ	Պոլիքլորացված ֆիֆենիլ
ՋԳ	Ջերմոցային գազ
ՋԷԿ	Ջերմաէլեկտրակայան

ՍԹԿ	Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
Վտ/մ ²	վատորը բաժանած քառակուսի մետրի
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
Փոքր ՀէԿ	Փոքր հիդրոէլեկտրակայան
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
CO ₂	Ածխաթթու գազ
GPRS	Ընդհանուր փաթեթային ռադիո ծառայություն

Սույն հաշվետվությունը կազմվել է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից իրականացված **Հանուն Հարավային Կովկասում Էներգետիկ պարադիգմի փոփոխությունների, 2-րդ փուլ»** ծրագրի շրջանակներում Brot für die Welt Protestant Development Service-ի և «Green Alternative» ՀԿ-ի աջակցությամբ:

Հաշվետվության նպատակն է վերլուծել 4 թիրախ՝ Արագածոտնի մարզի Թալին, Տավուշի մարզի Դիլիջան, Վայոց ձորի մարզի Եղեգիս և Լոռու մարզի Փամբակ խոշորացված համայնքների ընկալումները, պատրաստակամությունը և հնարավորությունները էներգետիկայի և կլիմայի փոփոխության քաղաքականությունների իրականացման տեսանկյունից, ուսումնասիրել կլիմայական և էներգետիկայի ոլորտները կարգավորող ՀՀ օրենսդրությունը, ՀՀ կառավարության որոշումները, քաղաքականությունները, ռազմավարությունները և ծրագրերը, միջազգային, այդ թվում՝ Փարիզյան համաձայնագրի, ՀԸԳՀ-ի շրջանակներում ստանձնած պարտավորությունների կատարմանը ներգրավվածությունը, ԵՄ Քաղաքապետերի դաշնագրին միանալու և ԿԷԿԳԾ գործիքի ներդրման պատրաստակամությունը և միանալու դեպքում հնարավոր ծրագրերի իրականացումը:

Թիրախ համայնքների ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ այս համայնքներում զարգանում է վերականգնվող էներգետիկան, հանքարդյունաբերությունը, համայնքներից 3-ն անտառամերձ են: Քանի որ այդ 3 ոլորտներն ուղղակիորեն կապված են կլիմայի փոփոխության հետ, անհրաժեշտ է գնահատել այս ոլորտների պետական քաղաքականությունների իրականացումը համայնքներում, դրանց սոցիալ-էկոլոգիական հետևանքները:

Ուսումնասիրված համայնքները խոցելի են կլիմայի փոփոխության նկատմամբ, ունեն բյուջետային մուտքերի սուղ հնարավորություններ: Համայնքների վարչական տարածքների բնական ռեսուրսները՝ ջուրը, հողը, ընդերքը, անտառն օգտագործող բիզնեսն բավարար չափով չի մասնակցում համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման և կլիմայի փոփոխության մեղմման ու հարմարվողականության ծրագրերի իրականացմանը, թեպետ բնական ռեսուրսների սպառումն ազդում է կլիմայի փոփոխության դիմակայունության վրա:

Ուսումնասիրությունը վկայում է, որ համայնքների հարցվածների շուրջ 72%-ը բավարար իրազեկված չէ կլիմայի փոփոխության և էներգետիկայի ոլորտների պետական քաղաքականությունների մասին: Ջերմոցային գազերի կրճատմանն ուղղված պետության միջազգային պարտավորությունների կատարմանը համայնքները մասնակցում են սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում՝ չգնահատելով այդ ծրագրերի կլիմայական ազդեցության բաղադրիչը:

Հաշվետվության կառուցվածքը

1. Կլիմայի փոփոխության միտումները Հայաստանում և թիրախ համայնքներում բաժնում ներկայացված է Հայաստանում և թիրախ համայնքներում կլիմայական ընդհանուր իրավիճակի նկարագրությունը, ջերմոցային գազերի արտանետումների տոկոսային հարաբերակցությունն ըստ ոլորտների: Ներկայացված են կլիմայի

փոփոխության կանխատեսումները Հայաստանում և թիրախ համայնքներում կլիմայի փոփոխության փաստացի հետևանքները:

2. ՀՀ կլիմայական քաղաքականությունը բաժնում ներկայացված են ազգային մակարդակում ԿՓ վերաբերյալ գործողությունները:

3. ԿԷԿԳԾ-ի ներդրման և ՀՀ ԱՍԳ-ով ստանձնած պարտավորությունների իրականացման նախադրյալները համայնքներում բաժնում ներկայացված է կայուն կլիմայական և էներգետիկ քաղաքականությունների ներդրման ԿԷԿԳԾ գործիքի հակիրճ բովանդակությունը, ԿԷԿԳԾ-ում կլիմայի փոփոխության ազդեցության հարմարվողականության և մեղմման միջոցառումների իրականացման ոլորտները: Ներկայացված է ԵՄ «Քաղաքապետերի դաշնագիր՝ հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնության գործընթացներում ՀՀ համայնքների ներգրավման, թիրախ համայնքների կողմից 2023թ. ներկայացված կլիմայի փոփոխության մեղմմանն ու հարմարվողականության ուղղվածության սուբվենցիոն ծրագրերը, Քաղաքապետերի դաշնագրին միանալու համայնքների նախատրամադրվածության վիճակը: Բաժնում տրված է ԱՍԳ իրականացման տասնամյա ժամանակահատվածում՝ 2021թ. հունվարի 1 – 2030թ. դեկտեմբեր, ստանձնած ՀՀ պարտավորությունները:

Բերված են 2023թ. ՀՀ-ում էլեկտրաէներգիա արտադրող լիցենզավորված կազմակերպությունների և մատակարար ընկերությունների կողմից 2022 թվականին ՀԷՑ-ին մատակարարված էլեկտրաէներգիայի քանակությունների ցուցանիշները:

Ներկայացված է ԱՍԳ-ի մեղմման գործողություններում ընդգրկված «Էներգետիկա», «արդյունաբերական պրոցեսների և արտադրանքի օգտագործում», «Թափոններ», «Անտառային տնտեսություն» ոլորտների վիճակը համայնքներում:

4. Եզրակացություն բաժնում ներկայացված են վեր հանված ոլորտային խնդիրները ուսումնասիրված համայնքներում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվետվության մեջ վերլուծված է կլիմայի և էներգետիկայի ոլորտների օրենսդրությունը, քաղաքականությունները, ծրագրերը, ռազմավարությունները, դրանց տեղայնացման խնդիրները թիրախ համայնքներում: Վերլուծվել է Փարիզյան համաձայնագրի շրջանակներում ՀՀ ստանձնած պարտավորությունների իրականացումը:

Համայնքների մասնակցությունն ապահովելու, կարծիքների և առաջարկությունների ձևավորման նպատակով օգտագործվել են հաղորդակցության տարբեր միջոցներ՝ անմիջական շփումներ, հարցազրույցներ, հարցումներ, քննարկումներ ոլորտային մասնագետների, ֆոկլուս խմբերի և ՏԻՄ-ի հետ:

Թիրախ համայնքներում հանդիպումներին ընդհանուր մասնակցել է 88 մարդ, հարցազրույցներ են անցկացվել 26 հոգու հետ, հարցումներին մասնակցել է 83 մարդ:

Հաշվետվության կազմման տեղեկատվական հենք են ՀՀ կառավարության, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, ՀՀ Արագածոտնի, Վայոց ձորի, Լոռու, Տավուշի մարզպետարանների, Թալին, Եղեգիս, Փամբակ, Դիլիջան խոշորացված համայնքների պաշտոնական կայքերը, Էներգետիկայի և կլիմայի փոփոխության ոլորտների վերաբերյալ ազգային և միջազգային համապատասխան իրավական ակտերը, փաստաթղթերը:

1.ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԹԻՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ


1.1 Ընդհանուր իրավիճակի նկարագրություն

Հայաստանը կլիմայի փոփոխության առումով համարվում է խոցելի երկիր: Հայաստանում ջերմաստիճանի աճը գլոբալ միջին ցուցանիշից բարձր է: Միայն 1929թ-ից 2016թ-ին միջին տարեկան ջերմաստիճանը բարձրացել է 1.23°C-ով (1961- 1990 թթ-ի համեմատ):

Համաշխարհային կլիմայական համակարգում Հայաստանին բաժին է ընկնում ՋԳ գլոբալ արտանետումների 0.02%-ը:

2019թ. ՋԳ արտանետումները կազմել են 11,150.8 Գգ CO₂ համ. (առանց Հողեր կատեգորիայի), որը 5.2%-ով (546.9 Գգ CO₂ համ.) բարձր է 2017թ. արտանետումներից:

2019թ. ընդհանուր ՋԳ զուտ արտանետումները կազմել են 10,777.8 Գգ CO₂ համ.¹, որն ըստ ոլորտների ունի հետևյալ տոկոսային բաշխվածությունը՝ նկար 1:



Նկար 1. ՋԳ արտանետումներն ըստ ոլորտների, 2019թ., Գգ CO₂

Հայաստանը բարձր ելակետային ջրային սթրեսով երկիր է, ինչը նշանակում է, որ օգտագործելի ջրային ռեսուրսների հարաբերակցությունը ջրառի հետ համարվում է ռիսկային: Ըստ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության՝ Հայաստանը համարվում է ջրասակավ երկիր՝ ջրի շահագործման ինդեքսը բարձր է

¹ Հայաստանի Հանրապետության ջերմոցային գազերի ազգային կադաստրի հաշվետվություն 1990-2019թթ.

45%-ից:² Հայաստանի տարածքով հոսում է շուրջ 9500 փոքր և միջին գետ, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 25 հազար կմ: Մակերևութային ջրերի միջին տարեկան հոսքը կազմում է 6.8 միլիարդ խմ, ստորերկրյա ջրերի պաշարները՝ 4 միլիարդ խմ:

Հայաստանին բնորոշ են բարձր հաճախության և ինտենսիվության ՀՎԵ-ներ, որոնք առաջացնում են երաշտներ, սողանքներ, սելավներ, անտառային հրդեհներ և այլն՝ զգալի կորուստներ պատճառելով բնակչությանը և տնտեսությանը:

1994-2014թթ. ընկած ժամանակահատվածում Հայաստանը կրել է ավելի քան 1,5 միլիարդ ԱՄՆ դոլարի վնաս՝ ջրհեղեղների, երկրաշարժերի, երաշտների, կարկտահարության, գարնանային ցրտահարության և սելավների տեսքով արտահայտված բնական աղետների հետևանքով³:

1935-2016թթ. միջին տարեկան տեղումների քանակը նվազել է մոտ 9%-ով՝ 1960-1991թթ. միջինի համեմատ⁴:

1.2 Կլիմայական փոփոխությունների կանխատեսումները Հայաստանում

Ըստ Կլիմայի փոփոխության 4-րդ ազգային հաղորդագրության՝ Հայաստանի ողջ տարածքում կանխատեսվում է միջին տարեկան ջերմաստիճանի բարձրացում մինչև 2040 թ. 1,6°C-ով, մինչև 2070 թ.՝ 3,3°C-ով և մինչև 2100 թ.՝ 4,7°C-ով՝ 1961-1990 թթ. բազային տարեկան միջինի (5,5°C) համեմատ:

Կանխատեսվում է, որ մինչև 2040 թ. մթնոլորտային տեղումները կնվազեն մինչև 2,7%, մինչև 2070 թ.՝ 5,4%, իսկ մինչև 2100 թ.՝ 8,3%՝ 1961-1990 թթ. տարեկան միջինի (592 մմ) համեմատությամբ:

Կանխատեսվում է, որ 2040 թ. գետերի հոսքի նվազումը կկազմի 14 %, 2070 թ.՝ 28 %, 2100 թ.՝ 39 %:

Կլիմայի փոփոխության արդյունքում կվատթարանան փխրուն լեռնային էկոհամակարգերը՝ հանգեցնելով հողի էրոզիայի, արոտավայրերի և մարգագետինների արտադրողականության նվազման, անտառների ճկունության և արտադրողականության մակարդակի նվազման:

Միջին լեռնային գոտու խոնավ անտառներում հնարավոր են որոշ քսերոֆիտացման գործընթացներ, որի արդյունքում տեղի կունենա տիպիկ տափաստանային, նոսրանտառների և շիբլակին բնորոշ տեսակների ներթափանցում: Ժամանակի ընթացքում մերձալպյան գոտու անտառները կփոխարինվեն խոնավ անտառներով, տեղի կունենա անտառային բուսականության վերին սահմանի բարձրացում:

² <https://www.ecolor.org/hy/news/climate-change/13126/>

³ Համաշխարհային բանկ. 2017թ. Աղետների ռիսկերի ֆինանսավորման վերաբերյալ երկրի գրություն. Հայաստան

⁴ <https://www.e-gov.am/gov-decrees/item/36064/>

Ծայրահեղ եղանակային պայմանների և ՀՎԵ-ների (ջերմային ալիքներ, հրդեհներ, հեղեղումներ) թվի աճով պայմանավորված՝ կավելանա ընդհանուր հիվանդացության, այդ թվում՝ վնասվածքների և մահացության ռիսկը (թունավորումներ, ջրախեղդություն և այլն): Կավելանա ջրային գործոնով պայմանավորված հիվանդությունների բեռը հատկապես այն շրջաններում, որտեղ արդեն իսկ բավարար չէ ջրի որակի, սանիտարական և անձնական հիգիենայի մակարդակը:

Առաջիկա 100 տարիների ընթացքում գյուղատնտեսության ոլորտում կանխատեսվում է.

- 10-30%-ով հողի խոնավության նվազում, 7-13%-ով գյուղատնտեսական տարբեր մշակաբույսերի խոնավապահովվածության նվազում
- ոռոգման ջրի պակաս, հողի ջրային դեֆիցիտի աճ 25-30%-ով
- ոռոգվող հողատարածքների արտադրողականության կրճատում մոտ 24%-ով
- հողերի և բնական արոտավայրերի դեգրադացում. արոտավայրերի ընդհանուր մակերեսի և դրանց բերքատվության կրճատում մինչև 2030թ. 4-10%-ով
- բերքատվության նվազում մինչև 2030թ. 8-14%-ով:

1.3 Կլիմայի փոփոխության միտումները թիրախ համայնքներում

1.3.1 Թալին համայնքի կլիման



Նկար 2. Թալին քաղաք

Թալին համայնքին բնորոշ են ավելի մեծ հաճախականությամբ կրկնվող հետևյալ ՀՎԵ-ները՝ երաշտներ, կարկտահարություն, հեղեղներ:

2022թ. ամռան սեզոնին ջերմաստիճանը Թալինում նորմայից բարձր է եղել միջինում 55 օր, 2022թ. աշնանը՝ 16 օր⁵: Թալին համայնքում 2021թ. ապրիլի երրորդ տասնօրյակին գրանցվել է ուժեղ երաշտ: Ամենաբարձր դասի շատ ուժեղ երաշտ գրանցվել է նույն տարվա հունիսի առաջին տասնօրյակից մինչև սեպտեմբերի վերջ⁶: Ամառային օրերի գումարային թիվը 2022 թ. նորմայից ավելի է եղել 71 օրով: Այս ցուցանիշով Թալինը ՀՀ համայնքների ցանկում առաջինն է: Սառնամանիքային օրերի քանակը զգալիորեն ցածր է եղել նորմայից 30 օրով: Տեղումների քանակը Հայաստանի նորմայից պակաս է շուրջ 60%-ով:

⁵<http://meteomonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekanq/eramsjak/III%20Eramsyak%202022%20.pdf>

⁶<http://meteomonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekanq/tarekan/Tarekan%202021.pdf>

Երկրորդական արտաձին երևույթներից Թալինին բնորոշ են հողերի դեգրադացիան և Էրոզիան: Միկրոկլիմայական իրավիճակի վրա զգալի ազդեցություն է թողնում անտառածածկ տարածքի բացակայությունը:


Համայնքի բնակիչները կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունը զգում են իրենց վրա, իրենց կենսապայմանների, եկամուտների և առողջության վրա:

«ԷկոԼուր»-ի կողմից Թալինի բնակչության և ՏԻՄ-ի ներկայացուցիչների հետ անցկացված հարցումների համաձայն՝ դիտվում են վաղ գարնանային ցրտահարության, կարկտահարության դեպքեր, երաշտների հետևանքով աղբյուրների ցամաքում, ոռոգման ջրի սակավություն: Բարձրադիր գոտիներում սկսել են աճել տեղանքին ոչ բնորոշ մրգատու ծառեր:

Անասնապահությունն անկում է ապրել ինչպես արոտավայրերի և խոտհարքերի կենսունակության կորստի, այնպես էլ տնտեսապես ոչ շահավետ լինելու պատճառով:

Կլիմայական ծանր չորային պայմաններում շատացել են հիպերտոնիկ, սրտանոթային հիվանդությունները: Ավելացել է նաև հոգեբանական ծանր սթրեսների թիվը:

1.3.2 Դիլիջան համայնքի կլիման



Նկար 3. Դիլիջան քաղաք

Դիլիջանին բնորոշ է մեղմ, լեռնաանտառային չափավոր, զով ամառը, արևաշատ տաք ձմեռը, ամբողջ տարվա ընթացքում չոր և տաք եղանակը: Հուլիսի միջին ջերմաստիճանը +18 է, հունվարին՝ 0-ից -2: Օդի հարաբերական խոնավությունը 70% է, տեղումների քանակը՝ 637 մմ, արևափայլի տևողությունը՝ 2091 ժամ:

Դիլիջանում 2022թ. ամառային օրերը նորմայից ավելի են եղել 45 օրով⁷: Այս ցուցանիշով Դիլիջանը 2022թ. հանրապետության երկրորդ համայնքն է Թալինից հետո (71 օր):

Աղստև գետի ջրային ելքը նվազել է՝ 2021թ. կազմելով նորմայի 72 %, 2022թ.՝ 73.7%: Ըստ Դիլիջանի հիդրոոդերևութաբանական կայանի տվյալի՝ 2021 թ. շատ ուժեղ և ուժեղ երաշտը սկսվել է հունիսի երրորդ տասնօրյակին և տևել է մինչև սեպտեմբերի երրորդ տասնօրյակ: ⁸ Շատ ուժեղ երաշտ գրանցվել է 2022թ. հուլիսի 21-31-ին:

⁷ <http://meteomonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekanq/tarekan/annual-2022-1.pdf>

⁸ <http://meteomonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekanq/tarekan/Tarekan%202021.pdf>

2022թ. ամսական տեղումների քանակը Դիլիջանում կազմել է նորմայի 43%-ը:

2006-2016թթ. Տավուշի մարզի կարկտային օրերի 50%-ը բաժին է ընկել Դիլիջանին:

Դիլիջան համայնքում՝ Աղստև գետի ավազանում, առկա են սողանքներ: Դրանց վրա ազդում են ինչպես բնական, այնպես էլ մարդածին գործոնները, որոնցից են անօրինական ծառահատումները, լանջերի գերխոնավեցումը, շինարարական աշխատանքները, պայթեցումները և հողային աշխատանքները:

«Դիլիջան» ազգային պարկի 2017-2026 թթ. կառավարման պլանի միջոցառումների ծրագրի համաձայն՝ կլիմայական պայմանների փոփոխությունները, անտառային ծածկի կրճատումը, ինչպես նաև անձրևների ակտիվությունը, բնական լանդշաֆտների խախտումը, էրոզիոն գործընթացները և մարդածին գործողությունները նպաստում են սելավների և սողանքների ակտիվացմանը: Խոշոր սողանքների վայրեր են Դիլիջան քաղաքը, Հաղարծին գյուղը, Պարզ լիճը⁹:

«ԷկոԼուր»-ի կողմից Դիլիջանի բնակչության և ՏԻՄ-ի ներկայացուցիչների հետ անցկացված հարցումների համաձայն՝ Դիլիջան համայնքի վրա կլիմայի փոփոխությունը՝ օդի ջերմաստիճանի անոմալ փոփոխությունը, ձյան ոչ առատ տեղումները, խոնավության պակասը, սակավաջրությունը, երաշտը, հաճախակի կարկտահարությունը թողել է իր բացասական ազդեցությունը: Վերջին տարիներին զգալի է մրգերի, մշակովի և վայրի հատապտուղների, կարտոֆիլի, լոբազգիների, եգիպտացորենի բերքատվության անկումը, ընտանի խոշոր և մանր եղջերավոր անասունների, խոզերի, ճագարների գլխանքանակի մոտ 70%-ով կրճատումը, ընտանի կենդանիների կաթնատվության և մեղվաընտանիքների բերքատվության նվազումը, մարդկանց առողջական վիճակի վատթարացումը:

1.3.3 Եղեգիս համայնքի կլիման



Նկար 4. Եղեգիս համայնք

Եղեգիս համայնքի կլիման մերձարևադարձային է, ձմեռը՝ ցուրտ, ամառը՝ շոգ:

⁹ «Դիլիջան» ազգային պարկի 2017-2026 թվականների կառավարման պլանի միջոցառումների ծրագիր

Ամենացուրտ ամիսը հունվարն է՝ - 32, ամենատաք հուլիսը՝ +38: Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը կազմում 630 մմ:

Համայնքի տարածքում հունիս-սեպտեմբեր ամիսներին հաճախակի դիտվում է բնական աղբյուրների և նրանցից սնվող գետային հոսքերի սակավաջրություն կամ իսպառ ցամաքում: Հաճախակի են երաշտի դեպքերը, որոնք որպես հետևանք հանգեցնում են բերքի կորստի:

Համայնքում առատ տեղումները դառնում են սելավների առաջացման, գետերի վարարման և հեղեղումների պատճառ, խոչընդոտում են գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, անասնապահությանը: Գետերի վարարման դեպքում վնասվում են ցանքատարածությունները: Համայնքին բնորոշ է ցրտահարություն գարնանային ամիսներին: Ուժեղ քամիները մեծ վնասներ են պատճառում համայնքին: Անտառային և խոտածածկ տարածքների հրդեհները հանգեցնում են նյութական և մարդկային կորուստների:

Քարագլխի և Հորսի ջրամբարների պատվարները վթարային են և դրանց փլուզման հետևանքով համայնքային հողերը ենթակա են ջրածածկման: Համայնքում անցյալ տարիներին կարկուտի հետևանքով բերքի կորուստը կազմել է 50 տոկոսից ավելի:

«ԷկոԼուր»-ի կողմից Եղեգիսի բնակչության և ՏԻՄ-ի ներկայացուցիչների հետ անցկացված հարցումների համաձայն՝ Եղեգիս համայնքում վերջին տարիներին հաճախակի են վաղ գարնանային ցրտահարությունները, ձյան ծածկույթը կրճատվել է: Ամառային սեզոնին զգացվում է անձրևների պակաս, նկատելի է կարկտահարության և երաշտի դեպքերի աճը: Պտղատու այգիների և մշակաբույսերի բերքատվությունը և բերքի որակն անկում է ապրել, բնական աղբյուրները ցամաքել են, ոռոգման ջուրը չի բավարարում: Սակավաջրության հետևանքով արոտավայրերի և խոտհարքների խոտածածկույթը նոսրացել է, նվազել է անասնակերը, ինչի հետևանքով կրճատվել է ընտանի անասունների գլխաքանակը: Վերջին 5-10 տարիների ընթացքում համայնքում կրճատվել են ցորենի, գարու, առվույտի, կարտոֆիլի, ծխախոտի ցանքատարածքները, խնձորի այգիների մակերեսները, նվազել է ընկուզենիների բերքատվությունը, մեղրատվությունը: Բնակչության շրջանում նկատվում է սրտանոթային հիվանդությունների, արևահարության դեպքերի աճ, դիմադրողականության անկում, զարկերակային ճնշման տատանումներ, ինքնազգացողության վատացում:

1.3.4 Փամբակ համայնքի կլիման



Նկար 5. Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայր

Փամբակ համայնքի կլիման խոնավ է, տեղումնառատ, մեղմ ձմեռներով ու զով ամառներով: Օդի միջին ջերմաստիճանը ձմռանը տատանվում է -3 աստիճանից մինչև -25 աստիճան, ամռանը՝ +14-ից +30 աստիճան: Բնակավայրերում տարեկան միջին տեղումների քանակը տարբեր է, տատանվում է 300-700 մմ սահմաններում:

Փամբակ համայնքը խոցելի է կլիմայի փոփոխության նկատմամբ:

«ԷկոԼուր»-ի կողմից Փամբակի բնակչության և ՏԻՄ-ի ներկայացուցիչների հետ անցկացված հարցումների համաձայն՝ Վահագնի բնակավայրում նկատվում է բնական ջրաղբյուրների ցամաքում, բացակայում է ոռոգման համակարգը, շատացել են անձրևային, կարկտահարության, ուժգին քամոտ օրերի և երաշտի տարիների թիվը, մարդկանց շրջանում առաջացել են սրտանոթային և ալերգիկ հիվանդություններ:

Մարգահովիտ բնակավայրում դիտվում է սակավաջրություն, բնական աղբյուրների ցամաքում, վարելահողերի կրճատում, հողի դեգրադացիա, տնային տնտեսությունների եկամուտների անկում:

Դեբեդ բնակավայրում հաճախակի են ցրտահարության, կարկուտի դեպքերը, նկատվում է բերքատվության անկում, տնային կենդանիների թվի նվազում, վատթարացել է բնակիչների առողջական վիճակը, նվազել են տնային տնտեսությունների եկամուտները:

Բոլոր հարցվածները նշել են, որ վերջին 5-10 տարիների ընթացքում կլիմայական փոփոխությունն արտացոլվել է մրգերի, մշակովի և վայրի հատապտուղների, կարտոֆիլի, մեղրի բերքատվության անկմամբ, ընտանի խոշոր և մանր եղջերավոր անասունների թվի կրճատման և դրանց կաթնատվության նվազմամբ, արոտավայրերում խոնգների բացակայությամբ մարդկանց առողջական վիճակի վատթարացմամբ:

2. ՀՀ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետությունը 1993 թ. մայիսին վավերացրել է Միացյալ ազգերի կազմակերպության Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիան, 2002 թ.

դեկտեմբերին՝ Կիոտոյի արձանագրությունը, իսկ 2017 թ. փետրվարին՝ Կիոտոյի արձանագրության Դոհայի փոփոխությունը և Փարիզյան համաձայնագիրը: 2019 թ. մայիսին Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է Մոնրեալի արձանագրության Կիզալիի փոփոխությունը՝ ստանձնելով փուլային եղանակով ՀՖԱ-ներից հրաժարման ուղղությամբ հանձնառություն:

ՀՀ պարտավորությունները բխում են ԿՓՇԿ Հավելվածում I-ում չընդգրկված զարգացող երկրի կարգավիճակից: Երկրի դիրքորոշումը Կոնվենցիայի ու Փարիզյան համաձայնագրի ներքո ձևակերպված է «Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող ներդրումները» փաստաթղթում, որը հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի N 41 արձանագրային որոշմամբ ու 2015թ. սեպտեմբերի 22-ին ներկայացվել է ՄԱԿ ԿՓՇԿ-ին: 2021թ-ի ապրիլի 22-ին ՀՀ կառավարությունն ընդունել է «Փարիզյան համաձայնագրի ներքո Հայաստանի Հանրապետության 2021-2030 թվականների ազգային մակարդակով սահմանված գործողությունները հաստատելու մասին» 610- L որոշումը ¹⁰ :

ՀՀ կառավարությունը 2021 թվականի մայիսի 13-ի թիվ 749-Լ որոշմամբ հաստատել է կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021-2025 թվականների միջոցառումների ցանկը¹¹: Ցանկը բաղկացած է իրագործման ենթակա միջոցառումների երկու փաթեթից՝ 1. Հայաստանում ազգային մակարդակով ՀԱԾ-ի գործընթացի ներդրում՝ 17 միջոցառում, այդ թվում ջրային ռեսուրսների, գյուղատնտեսության, առողջապահության, էներգետիկայի, զբոսաշրջության, անտառի հարմարվողականության միջոցառումների մշակում ՀՀ Տավուշի և Շիրակի մարզերի կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումների ծրագրի մշակում մինչև 2022թ-ը և մինչև 2025թ-ը՝ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Լոռու, Կոտայքի, Գեղարքունիքի, Սյունիքի, Վայոց ձորի մարզերի համար պիլոտային ծրագրերի մշակում: Երկրորդ փաթեթը վերաբերում է ՀԱԾ գործընթացի համար ինստիտուցիոնալ և տեխնիկական կարողությունների զարգացման համար 9 միջոցառման իրականացմանը:

ՀՀ գործող իրավական նորմերում կատարվում են փոփոխություններ: Մասնավորապես, ՀՀ ջրային օրենսգրքում 07.07.22 ՀՕ-316-ով կատարվել են համապատասխան փոփոխություններ: Կլիմայի փոփոխության բաղադրիչով որոշակի կարգավորումներ ներառվել են «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքում¹²:

Կլիմայի փոփոխության և հարմարվողականության խնդիրները տեղ են գտել նաև ՀՀ և ԵՄ և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի 4-րդ գլխում (CEPA, 2017 թվական): ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի եվրոպական Համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման ճանապարհային քարտեզը հաստատելու մասին» N666-L որոշմամբ հաստատված

¹⁰ <https://www.e-gov.am/gov-decrees/item/36064/>

¹¹ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=160390>

¹² <http://parliament.am/legislation.php?sel=show&ID=8747&lang=arm>

«Ճանապարհային քարտեզ Եվրոպական միության և ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկման» հավելված 1-ի 120-131 կետերով նախատեսվում է կլիմայի փոփոխությանն առնչվող գործողությունները:

3. ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՓԱՐԻԶՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՎ ՀՀ ՍՏԱՆԶՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

2008թ. կլիմայի և էներգետիկայի վերաբերյալ ԵՄ միջոցառումների փաթեթի ընդունումից հետո Եվրահանձնաժողովը գործարկեց Քաղաքապետերի դաշնագիրը, որը նախատեսված էր աջակցելու տեղական իշխանությունների ջանքերին՝ իրականացնել կայուն էներգետիկ քաղաքականություն և կրճատել ջերմոցային գազերի արտանետումները:

2015-ին Եվրահանձնաժողովը գործարկեց կլիմայի և էներգետիկայի վերաբերյալ Քաղաքապետերի նոր ինտեգրված դաշնագիր: Կողմերը, որոնք ստորագրել են այն, պարտավորվել են պատրաստել և իրականացնել ԿԷԿԳԾ մինչև 2030 թ.:

ԿԷԿԳԾ-Ն նոր գործիք է, որը նպաստում է կայուն կլիմայական և էներգետիկ քաղաքականությունների ներդրմանը համայնքային ծրագրերում: ԿԷԿԳԾ-ի օգտագործումը կհեշտացնի համայնքների ներգրավումը կլիմայի և էներգետիկայի միջազգային ներդրումային ծրագրերին, որոնք անհրաժեշտ են սուղ բյուջեներ ունեցող և պետական սուբսիդիաներին ապավինող համայնքներին:

ԿԷԿԳԾ-Ն նպատակ ունի սահմանել կլիմայի փոփոխության մեղմման միջոցառումներ՝ նվազեցնելու CO₂-ի արտանետումներն առնվազն 40%-ով: Այն հնարավորություն է տալիս գնահատել համայնքների պատրաստվածությունը՝ իրականացնելու սոցիալ-էկոլոգիական, էներգետիկ, կլիմայական միջոցառումներ և ծրագրեր, որոնք ուղղված են ջերմոցային գազերի արտանետումների նվազեցմանը՝ հաշվի առնելով համայնքների առանձնահատկությունները, հնարավորությունները և բարելավվելով տնտեսական, սոցիալական և բնապահպանական իրավիճակը:

ԿԷԿԳԾ-ում կլիմայի փոփոխության ազդեցության մեղմման միջոցառումների իրականացման ոլորտներն են.

- Հանրային շենքեր, շինություններ և օբյեկտներ
- Երրորդային (ոչ համայնքային) շենքեր, շինություններ և օբյեկտներ
- Բնակելի շենքեր
- Տրանսպորտ
- Արդյունաբերություն
- Էներգիայի տեղական արտադրություն,
- Ջերմության/ցրտի տեղական արտադրություն
- Այլ (օրինակ՝ գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնաբուծություն):

ԿԷԿԳԾ-ով կլիմայի փոփոխության ազդեցության հարմարվողականության

միջոցառումների իրականացման համար կարևոր են հետևյալ սեկտորները, որոնք կարող են օգնել բարելավել համայնքի կայունությունը.

- Ենթակառուցվածք
- Կոմունալ ծառայություններ
- Հողօգտագործման պլանավորում
- Շրջակա միջավայր և կենսաբազմազանություն
- Գյուղատնտեսություն և անտառային տնտեսություն

Հայաստանի 27 համայնք ներգրավված է ԵՄ «Քաղաքապետերի դաշնագիր՝ հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնության գործընթացներում¹³:

Թիրախ համայնք Դիլիջանի մասնակցությունը Քաղաքապետերի դաշնագրին կասեցվել է տարիներ առաջ: Ներկայում համայնքի գործող վարչակազմը և հարցվածների 55%-ն ունեն դրական վերաբերմունք կրկին միանալու Քաղաքապետերի դաշնագրին: Թալին համայնքի ավագանին 2023թ. ապրիլի 28-ի N 52-Ա որոշմամբ հաստատել է «Քաղաքապետերի Դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնությանը համայնքի միանալը: Ծրագրի թիրախ համայնքներ Եղեգիսը և Փամբակը ներգրավված չեն այս գործընթացում, սակայն հարցումները ցույց են տվել, որ պատրաստակամ են ներգրավվել, ինչի համար կարիք ունեն մասնագիտական խորհրդատվության:

Ուսումնասիրված համայնքների սուբվենցիոն ծրագրերի որոշակի մասը թեև ունի կլիմայի փոփոխության ազդեցության մեղմման և հարմարվողականության ուղղվածություն, սակայն դրանք չեն դիտարկվել, գնահատվել և պլանավորվել ջերմոցային գազերի արտանետումների կրճատման տեսանկյունից:

Աղյուսակ 1.

Թիրախ համայնքների կողմից 2023թ. ներկայացված կլիմայի փոփոխության մեղմմանն ու հարմարվողականությանն ուղղված սուբվենցիոն ծրագրեր

Հ/Հ	Համայնք	2023թ. ներկայացված կլիմայի փոփոխության մեղմմանն ու հարմարվողականությանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի թիվը	
		Մեղմում	Հարմարվողականություն
1.	Թալին	1	5
2.	Եղեգիս	1	2
3.	Դիլիջան	2	3
4	Փամբակ	2	2

¹³ <https://com-east.eu/hy/community-signatories-am/>

Թիրախի համայնքները չունեն կամովին ստանձնած պարտավորություններ՝ կրճատելու ջերմոցային գազերը: Այս առումով կարևոր է Քաղաքապետերի դաշնագրին համայնքների անդամակցումը, ինչը կապահովի համայնքի կայուն, կանաչ զարգացումը և կնպաստի Փարիզյան համաձայնագրի շրջանակներում ՀՀ ստանձնած ԱՍԳ¹⁴ պարտավորությունների կատարմանը:

ՀՀ ԱՍԳ-ով երկրը պարտավորվել է 40 տոկոսով կրճատել ջերմոցային գազերի արտանետումները մինչև 2030թ-ը 1990թ. արտանետումների մակարդակի համեմատ: Մինչև 2030թ. Հայաստանը կրկնապատկելու է վերականգնվող էներգիայի մասնաբաժինը էներգիայի արտադրության մեջ: Անտառի նոր ազգային ծրագրի ընդունմամբ նախատեսվում է անտառածածկի ավելացում՝ Հայաստանի տարածքի 12.9% չափով մինչև 2030 թ.: Սահմանելու է թափանցիկության և հաշվետվողականության բարելավված շրջանակ՝ հսկելու Փարիզյան համաձայնագրի ներքո երկրի ստանձնած պարտավորությունների կատարման առաջընթացը:

ԱՍԳ-ի մեղմման գործողություններում ընդգրկված ոլորտներն են.

ա. Էներգետիկա (ներառյալ էներգիայի արտադրություն և սպառում)

բ. Արդյունաբերական պրոցեսներ և արտադրանքի օգտագործում (հանքային արդյունաբերություն և F-գազեր)

գ. Գյուղատնտեսություն (աղիքային խմորում, ուղղակի և անուղղակի N2O արտանետումներ կառավարվող հողերից)

դ. Թափոններ (կոշտ թափոնների կառավարում, կեղտաջրեր)

ե. Անտառային տնտեսություն (անտառապատում, անտառների պահպանություն) և այլ հողօգտագործում:

3.1 Ուսումնասիրված համայնքների գնահատում՝ «Էներգետիկա» ոլորտ

ՀՀ ջերմոցային գազերի ազգային կադաստրի 1990-2019թթ. հաշվետվության համաձայն՝ Էներգետիկայի ոլորտում CO₂-ի արտանետումներն ավելացել են 2010թ. 5,809.6 Գգ CO₂ համ համեմատ 2019թ. հասնելով 7,138.5 Գգ CO₂ համ:¹⁵

Հայաստանի սեփական էներգակիրներն են հիդրոռեսուրսը (ջրային էներգապաշարների պոտենցիալը կազմում է 21.8 մլրդ կՎտ.ժ, այդ թվում՝ խոշոր և միջին գետերինը՝ 18.6 մլրդ կՎտ.ժ, փոքր գետերինը՝ 3.2 մլրդ կՎտ.ժ), վառելիքայտը և քիչ քանակությամբ կենսավառելիքը (աթար), քամին և արևը:

2024թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ ընդհանուր 559.14 ՄՎտ դրվածքային հզորությամբ արևային կայան և ինքնավար արևային էլեկտրակայան միացած է էլեկտրաէներգետիկական համակարգին: Նախատեսվում է արևային էներգետիկայի մասնաբաժինը էներգետիկ հաշվեկշռում հասցնել 1500 ՄՎտ-ի: 2024թ. ապրիլի 1-ի դրությամբ 395 389 ԿՎտ ընդհանուր հզորությամբ էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա ունի 189 ՓՀԷԿ, որոնք ունեն և 927,9 մլն կՎտ.ժամ էլեկտրաէներգիայի փաստացի միջին տարեկան առաքման ծավալ: Այս փոքր ՀԷԿ-երից 132-ը կառուցված են 70 գետերի և բնական ջրհոսքերի վրա:

¹⁴ <https://www.e-gov.am/gov-decrees/item/36064/>

¹⁵ <https://drive.google.com/file/d/1zVwXLYeg4ng74sMnzWt4E4jXmxrkVZxv/view?pli=1>

2024թ. շահագործվում է 4.23 ՄՎտ հզորությամբ հողմային էլեկտրակայան:

3.1.1 Բնական գազի սպառումը և դրա նվազեցմանն ուղղված կառավարության քաղաքականությունը

ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրով¹⁶ նախատեսում է նվազեցնել բնական գազի կիրառությունը՝ զարգացնելով կանաչ տնտեսությունը:

Հայաստանում էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքում բնական գազի մասնաբաժինը կազմում է 41%, իսկ էլեկտրաէներգիայի ներքին սպառման զամբյուղում՝ 29%՝ հաշվի առնելով Իրանի հետ գործող էլեկտրաէներգիա գազի դիմաց պայմանագիրը:

Հայաստանում տնային տնտեսությունների 90 տոկոսից ավելին բնական գազն օգտագործում է որպես ջեռուցման և սննդի պատրաստման միջոց, իսկ անձնական օգտագործման ավտոմեքենաների 80 տոկոսից ավելին բնական գազն օգտագործում է որպես վառելիք:

«Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրի» համաձայն՝ ներքին պահանջարկի բավարարման նպատակով բնական գազի ամբողջական փոխարինումը արևային էներգիայով՝ ներքին պահանջարկի անփոփոխ պայմաններում կպահանջի վերականգնվող (բացի հիդրոէներգետիկայից) էներգիայով աշխատող 700 ՄՎտ հզորությամբ կայանների կառուցում:

Թալին, Դիլիջան, Փամբակ և Եղեգիս խոշորացված համայնքներում 2023թ. ընթացքում «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի իրականացրած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն բնակավայրերը, որոնք գազաֆիկացված են, մեծ կախվածություն ունեն գազամատակարարումից, իսկ այն բնակավայրերը, որոնք գազաֆիկացված չեն և օգտագործում են վառելափայտ, մեծացնում են առողջ անտառի վրա ճնշումը, քանի որ անվճար տրամադրվող անտառի թափուկը գրեթե սպառված է:

3.1.2 Փոքր հիդրոէներգետիկա

Հայաստանում շահագործվում է 189 փոքր ՀԷԿ՝ 390 ՄՎտ ընդհանուր հզորությամբ: 2023 թվականին ՓՀԷԿ-երը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին մատակարարել են 503,7 մլն.կվտ/ժամ էլեկտրաէներգիա (ընդհանուրի 8,58%-ը): 2024թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա ունեն 190 ՓՀԷԿ՝ 402 016,1 կվտ ընդհանուր հզորությամբ և 925,5 մլն կվտ.ժամ էլեկտրաէներգիայի փաստացի միջին տարեկան առաքման ծավալով: Նույն օրվա դրությամբ կառուցման փուլում են գտնվում 16 ՓՀԷԿ՝ 59 287,0 կվտ ընդհանուր հզորությամբ և 232,4 մլն կվտ.ժամ էլեկտրաէներգիայի փաստացի միջին տարեկան առաքման ծավալով:

Հայաստանում փոքր ՀԷԿ-երի ոլորտի զարգացման համար ի սկզբանե ՀՀ կառավարությունը որդեգրել է բիզնեսին արտոնությունների տրամադրման քաղաքականություն՝ ջրային ռեսուրսների օգտագործման համար վճարումներից ազատում, փոքր ՀԷԿ-երի արտադրած էլեկտրաէներգիայի գնման բարձր սակագին և պետական երաշխիք 15 տարով: Փոքր ՀԷԿ-երը ՀՀ կառավարության համապատասխան

¹⁶ <https://www.gov.am/files/docs/4586.pdf>

որոշմամբ կարող էին օգտագործել գետային հոսքի ավելի քան 90%-ը էլեկտրաէներգիայի արտադրության համար: Փոքր ՀԷԿ-երի կառուցման համար ջրօգտագործման թույլտվություններ են տրամադրվել ջրադբյուրների ձևավորման գոտիներում, ինչը Ջրային օրենսգրքի պահանջների խախտում է: Պետական այս քաղաքականությունը հանգեցրեց գետային էկոհամակարգերի խախտման, գետային ձկնապաշարների, բուսական և կենդանական աշխարհի անկման, ոռոգման ջրի դեֆիցիտի, աղբյուրների չորացման, գետերի սանիտարական վիճակի վատթարացման, միկրոկլիմայի փոփոխության, լանդշաֆտների խախտման, ինչը հակասում է կլիմայի փոփոխության ազդեցության հարմարվողականության և մեղմման պետական քաղաքականությանը:

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ ՀՀ-ում կատարվեցին մի շարք օրենսդրական փոփոխություններ, մասնավորապես, 2019թ. հունիսի 28-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը¹⁷, 2022թ. հուլիսի 7-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքը¹⁸, «ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 927-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության 2018թ. հունվարի 25-ի 57-Ն որոշումը¹⁹, 2021 թ. ապրիլի 8-ի «Նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների ջրօգտագործման թույլտվությունների հայտերի մերժում նախատեսված Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ՝ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր հանդիսացող կամ դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի ծանրաբեռնված գետերի ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 488-Ն որոշումը²⁰: Այս փոփոխություններով սահմանվեցին նոր փոքր ՀԷԿ-երի կառուցման նպատակով ՋԹ-ների տրամադրման մերժման դեպքերը, սահմանվեց գետերի ցանկը, որոնց վրա արգելվում է նոր փոքր ՀԷԿ-երի կառուցումը, փոքր ՀԷԿ-երի համար սահմանվեցին ջրօգտագործման վճարներ, փոխվեց բնապահպանական թողքի հաշվարկի մեթոդաբանությունը: Սակայն այդ նորմերի կիրարկումը հետադարձ ուժ չունի և կուտակված խնդիրների հիմնական մասը մնացին չլուծված: Վերոնշյալ խնդիրները ակներև են ուսումնասիրված համայնքներում, որտեղ գործում են փոքր ՀԷԿ-եր:

Եղեգիս համայնք՝ փոքր հիդրոէներգետիկա

Եղեգիս համայնքում 13 ընկերություն շահագործում է 15 փոքր ՀԷԿ, որոնք կառուցված են Եղեգիս գետի և վտակների վրա: Փոքր ՀԷԿ-երի շահագործման հետևանքով առաջացած խնդիրներն են.

- Գետի հոսքը դերիվացված է 51.46%-ով, իսկ նախատեսվող փոքր ՀԷԿ-երի շահագործման դեպքում այդ մեծությունը կհասնի 76.69%-ի, ինչն արգելված է ՀՀ ջրային օրենսգրքով:
- Ըստ բնակիչների՝ փոքր ՀԷԿ-երի քանակի ավելացումը համայնքում հանգեցրել է տեղական կլիմայի փոփոխության և խոնավության պակասի:

¹⁷ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=132103>
¹⁸ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166211>
¹⁹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=119430>
²⁰ <https://www.e-gov.am/gov-decrees/item/35913/>

- Խմելու ջրի աղբյուրները չորացել են:
- Վերջին տարիներին զգալի են ծառերի չորացման դեպքերը:
- Եղեգիս գետում պակասել է ջրհոսքը,
- Եղեգիս գետում վերացել է «կարմրախայտ» ձկնատեսակը:
- ՓՀԷԿ-երը հաճախ չեն պահպանում գետի բնապահպանական թողքը, ինչի պատճառով ոռոգման սեզոնին առաջանում է ոռոգման ջրի սակավության խնդիր:
- Վատանում են բնակիչների կենսապայմանները:
- Հաճախակի են ՓՀԷԿ-ի խողովակաշարի վթարի հետևանքով բնակիչների մշակովի հողամասերի ողողումների դեպքերը:
- Որոշ փոքր ՀԷԿ-եր համայնքային բյուջե չեն վճարել վարձակալած հողերի վարձակալության վճարները:
- Փոքր ՀԷԿ-եր շահագործող ընկերությունները չեն աջակցում համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը, համայնքի կլիմայական հարմարվողականության ծրագրերի իրականացմանը:



Նկար 6. Եղեգիս գետի ափամերձ տարածքի չորացած ծառեր Գետիկ բնակավայրի տարածքում



Նկար 7. Փոքր ՀԷԿ-ը Եղեգիս գետի վրա



Նկար 8. Եղեգիս գետը փոքր ՀԷԿ-ի կողմից ջրառից հետո

Փամբակ համայնք՝ փոքր հիդրոէներգետիկա

Փամբակ համայնքում 5 ընկերություն շահագործում է 6 փոքր ՀԷԿ: Փամբակ համայնքում փոքր ՀԷԿ-երի խնդիրները հիմնականում նման են Եղեգիս համայնքում առաջացած խնդիրներին:

Փամբակ համայնքով հոսող Ձորագետ գետի վրա նախատեսվող «Լորիբերդ-1» և «Լորիբերդ-2» փոքր ՀԷԿ-ի ենթակառուցվածքները թեպետ Փամբակ համայնքի տարածքում չեն, այնուամենայնիվ, եթե փորձաքննական եզրակացությունը դրական լինի և դրանք կառուցվեն, ապա գետի հունի 50%-ից ավելին կփակվի խողովակաշարերի մեջ, ինչը կստեղծի արտակարգ իրավիճակ գետի համար, կավելանա կլիմայական ճնշումը շրջակա միջավայրի վրա և գյուղատնտեսությամբ, զբոսաշրջությամբ զբաղվող բնակչության շրջանում կստեղծվի սոցիալական լարվածություն:

Դիլիջան համայնք՝ փոքր հիդրոէներգետիկա

Դիլիջան համայնքում 3 ընկերություն շահագործում է 4 փոքր ՀԷԿ: 2-ը կառուցված են «Դիլիջան» ազգային պարկի տարածքում: Փոքր ՀԷԿ-երի դերիվացիոն խողովակաշարերի անցման տարածքներում գետերը մնում են սակավաջուր կամ ընդհանրապես անջուր: Վատանում է փոքր ՀԷԿ-երի շահագործման տակ գտնվող գետային հատվածի սանիտարական վիճակը: Վերգետնյա խողովակաշարերը խանգարում են վայրի կենդանիների տեղաշարժին: Այս բոլոր բացասական երևույթները մեծացրել են կլիմայական ռիսկերը համայնքի համար, և վերականգնվող էներգիայի շնորհիվ սոցիալական դրական փոփոխությունների փոխարեն համայնքում ի հայտ են եկել նոր սոցիալական խնդիրներ, որոնք դեռևս չեն լուծվել:

3.1.3 Արևային էներգետիկա

Վերջին տարիներին ՀՀ-ում զարգացում է ապրում արևային էներգետիկան: Հայաստանն ունի արևային էներգիայի մեծ ներուժ (1մ² հորիզոնական մակերևույթի վրա արևային էներգիայի հոսքի միջին տարեկան արժեքը կազմում է 1720 կՎտժ/մ², իսկ հանրապետության տարածքի մեկ քառորդն օժտված է տարեկան 1850 կՎտժ/մ² ինտենսիվությամբ արևային էներգիայի պաշարներով: Մասնավոր հատվածի կողմից

ներմուծվում են ինչպես արևային ջրատաքացուցիչ համակարգերի առանձին մասեր, դրանց հետագա հավաքակցման նպատակով, այնպես էլ ամբողջական համակարգեր: Ներկայում ՀՀ-ում արևային ջրատաքացուցիչների տեղակայանքների կիրառումը բերում է ոչ միայն էներգախնայողության, այլ նաև դառել է տնտեսապես շահավետ:

2023թ. հոկտեմբերի 26-ին ՀՀ կառավարությունն ընդունեց «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի N 48-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշումը²¹, համաձայն որի վերականգնվող էներգետիկայի հզորությունը մինչև 2040 թվականը կհասցվի 2000 ՄՎտ-ի, որից 1500 ՄՎտ-ն՝ արևային, իսկ 500 ՄՎտ-ն՝ հողմային էներգետիկայի հաշվին: Արդյունքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ արտադրված էլեկտրական էներգիայի մասնաբաժինը էլեկտրական էներգիայի համախառն վերջնական սպառման մեջ 2030 թվականին, ներառյալ խոշոր հիդրոէլեկտրակայանները, կհասնի շուրջ 50%-ի, իսկ մինչև 2040 թվականը՝ շուրջ 60%-ի:

Հաստատված արևային կայանների ծրագրերից ամենամեծ՝ 200 ՄՎտ հզորությունն ունի «Այգ 1» արևային ֆոտովոլտային կայանը, որը կառուցվում է ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքում:

Թալին համայնքը՝ որպես արևային էներգետիկայի զարգացման կենտրոն

Ծրագրի թիրախ Թալին համայնքում արդեն իսկ էլեկտրաէներգիա է արտադրում 26.953 ՄՎտ ընդհանուր հզորությամբ 6 արդյունաբերական արևային ֆոտովոլտային կայան:



Նկար 10. «Թալին 1» արևային կայանը Թալին քաղաքում

Կառուցման փուլում է գտնվում 225.85 ՄՎտ ընդհանուր հզորությամբ 7 արևային կայան, այդ թվում՝ 200 ՄՎտ հզորությամբ «Այգ-1» արևային կայանը: 5 ՄՎտ հզորությամբ ևս 1 արևային կայանի կառուցման հայտը գտնվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության փուլում:

Արևային էներգետիկայի զարգացման համատեքստում համայնքը փոխում է իր զարգացման առաջնահերթությունները՝ մասնակից դառնալով կլիմայի փոփոխության և ջերմոցային զագերի կրճատման գլոբալ գործընթացներին: Համայնքը վերածվում է Հայաստանի արևային էներգետիկայի զարգացման կենտրոններից մեկի:

²¹ <https://e-gov.am/gov-decrees/item/41448/>

«Այգ-1» արևային ֆոտովոլտային կայանի մասին

«Այգ-1» ծրագիրն իրականացնում է Արաբական Միացյալ Էմիրությունների «Մասդար» ընկերության և Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդի կողմից ստեղծված «Մասդար Արմենիա» ընկերությունը: Ծրագրի ընդհանուր ներդրումային արժեքը 200 միլիոն ԱՄՆ դոլար է: Կտեղադրվի 450.000 ֆոտովոլտային վահանակ: Կայանի կառուցումը նախատեսվում է ավարտել 2025թ. այն կգործի 25 տարի: Սակայն կայանի կառուցումը ներկայում դադարեցված է, պատճառները հայտնի չեն:

Էլեկտրակայանի կառուցման համար 547.31 հա գյուղատնտեսական նշանակության հողի կատեգորիան փոխվել է էներգետիկ նշանակության և նվիրաբերվել «Այգ 1» ծրագրի իրականացման համար: Հողերի կադաստրային արժեքը շուրջ 2 միլիարդ 896 միլիոն 8 հազար դրամ է: «Այգ-1» ծրագրի շրջանակներում «Մասդար» ընկերությունը Դաշտադեմ և Թալին համայնքների հետ կնքած նվիրաբերության պայմանագրով իրականացրել է 320 միլիոն դրամի չափով համայնքային զարգացման վճարում: Եվս 700 միլիոն դրամ գումար համայնքին կհատկացվի պետական բյուջեից սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում, այսինքն, ՀՀ հարկատուների, այդ թվում և Թալին համայնքի բնակիչների հաշվին:

«Այգ-1» կայանի համար «Մասդար Արմենիա» ընկերությանը տրամադրված արտոնությունները պայմանավորված են վերականգնվող էներգետիկայի զարգացմամբ, և ՀՀ միջազգային պարտավորություններով՝ նվազեցնելու ջերմոցային գազերը, իրականացնելու կլիմայի փոփոխության մեղմման միջոցառումներ: Կայանի ՇՄԱԳ հաշվետվության մեջ առկա չեն տարեկան արտադրվող էլեկտրաէներգիայի և դրա արդյունքում կրճատվող ջերմոցային գազերի քանակությունների մասին տվյալներ:

«ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի հանդիպումների ժամանակ համայնքի հարցված բնակիչների 80%-ը կարծում է, որ, հաշվի առնելով համայնքի արևային էներգիայի ռեսուրսների առկայությունը, նպատակահարմար է նախաձեռնել համայնքային արևային կայանի կառուցում, ինչը կխթանի համայնքի էներգետիկ անկախությունը և կնպաստի էներգետիկ աղքատության կրճատմանը: Այդ խնդիրների լուծմանը կօժանադակի նաև պետության կողմից անհատական ինքնավար արևային կայանների և ջրատաքացուցիչների տեղադրման համար խրախուսման մեխանիզմների ներդրումը:

Համայնքում արևային էներգետիկայի զարգացմամբ պայմանավորված առաջացել են նոր խնդիրներ.

- 630 հա գյուղատնտեսական նշանակության հողերի կրճատում
- հողօգտագործման նվազումից բնակչության և համայնքային բյուջեի եկամտային մասի կրճատում
- Էլեկտրոնային թափոնների կառավարման անորոշություն
- Միջբնակավայրային կոնֆլիկտներ՝ կապված ծրագրի իրականացման դիմաց համայնքին հատկացվող սոցիալական ներդրումների բաշխման հետ
- Նվիրաբերված հողերի կադաստրային արժեքների և սոցիալական ներդրումների անհամաչափություն

- Գնահատված չէ հողի հարկից համայնքի ամենամյա եկամուտների նվազման հարցը
- Արևային կայանների կառուցման նախագծերում ջերմոցային գազերի՝ ըստ ոլորտների՝ հողագործություն, անասնապահություն, թափոններ, շինարարություն, հաշվառման բացակայություն:

Թալին համայնքի օրինակով վեր հանված արևային էներգետիկայի ոլորտի խնդիրների լուծման համար անհրաժեշտ է կլիմայական և էներգետիկ քաղաքականություններում ներդնել նորմատիվ կարգավորումներ:

Համայնքների վարչական տարածքներում գործող վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող էլեկտրակայանները չեն նպաստում համայնքների էներգետիկ աղքատության կրճատմանը: Այդ կայանները շահագործող ընկերություններն օրենքով չունեն ազդակիր համայնքների նկատմամբ սոցիալ-տնտեսական զարգացմանն օժանդակելու պարտավորություններ:

Համայնքներն էներգետիկ կառավարման համակարգի ներդրման գործողությունների ծրագրի կարիք ունեն՝ կառավարելու էներգետիկ հոսքերը, այդ թվում՝ էներգաարդյունավետության միջոցառումների իրականացումը, էներգախնայողության ապահովումն ու ջերմոցային գազերի արտանետումների կրճատումը: Համայնքները կարիք ունեն համայնքային նշանակության վերականգնվող էներգետիկ կայանների:

3.1.4 **էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումներ համայնքներում 2022-2023թթ.**

ՀՀ կառավարությունը 2022 թվականի ապրիլի 15-ին ընդունեց «Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության ծրագիրը հաստատելու մասին» N 520-Լ որոշումը՝ աջակցելու բնակարանների էներգաարդյունավետ վերանորոգմանը: Ծրագիրը կշարունակվի մինչև 2024թ. հուլիսի 1-ը²²:

Հաստատվել և իրականացվել է բնակելի տների և բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետ վերանորոգման պետական աջակցության ծրագիրը, որի շրջանակներում ֆինանսական կառույցների կողմից ծրագրի 1265 շահառուի 2022թ. տրամադրվել է շուրջ 2,6 միլիարդ ՀՀ դրամ հանրագումարի վարկ²³:

Պետությունը խրախուսում է մինչև 10 միլիոն դրամ սահմանաչափով արևային ինքնավար համակարգերի տեղադրումը արտոնյալ տոկոսադրույքներով՝

- 0-2% եթե սահմանամեծ շրջանում է դիմողը
- 2% եթե գյուղ է
- 3% եթե մարզային քաղաք է
- 5% տոկոս եթե Երևանում է

Պետական խրախուսման գործող մեխանիզմները բավարար չեն հանրապետությունում բնակֆոնդի տների լիարժեք ջերմամեկուսացման և վերականգնվող էներգետիկայի

²² <https://www.e-gov.am/gov-decrees/item/40699/>

²³ <https://www.gov.am/files/docs/5274.pdf>

հաշվին ջեռուցման խնդիրը լուծելու համար, ինչը պայմանավորված է բնակչության անվճարունակությամբ:

Ուսումնասիրված բոլոր չորս համայնքներում էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումներից է փողոցային լուսավորության փոխարինումը էներգախնայող լամպերով, հանրային շինությունների ջերմամեկուսացման միջոցառումները և արևային ինքնավար կայանների ու ջրատաքացուցիչ համակարգերի տեղադրումը:

Թալին համայնք

Թալինի համայնքապետարանի շենքի տանիքին տեղադրվել է 30 կՎտ, Մշակույթի տան տանիքին՝ 20 կՎտ, Գեղարվեստի տան տանիքին՝ 15 կՎտ, մարզադպրոցի 10 կՎտ, բնակելի շենքերից մեկի տանիքին 10 կՎտ հզորությամբ արևային ինքնավար կայաններ:



Նկար 10. Արևային ինքնավար կայան Թալինի համայնքապետարանի շենքի տանիքին

2021թ. նախատեսվել են «Վերին Բազմաբերդ համայնքի մշակույթի տան տանիքին 12.6 կՎտ դրվածքային հզորությամբ արևային կայանի կառուցման աշխատանքներ», «Մաստարա համայնքի 6-րդ փող 2-րդ փակուղու, 5-րդ փող. 3-րդ նրբ., 14-րդ փող 1-ին նրբ., 12-րդ փող., 4-րդ փող 1-ին նրբ լուսավորության ցանցի աշխատանքներ», «Կաթնաղբյուր համայնքի փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցում», «Դաշտադեմ գյուղի նոր լուսավորության ցանցի կառուցում» ծրագրերը:

Դիլիջան համայնք

Դիլիջանում իրականացվել են էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումներ: Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը Դիլիջան քաղաքում իրականացրել է փողոցային լուսավորության ծրագիր²⁴ և Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոցում էներգախնայողության միջոցառումներ:²⁵

²⁴ <https://r2e2.am/am/2017/02/02/dilijan-city-street-lighting/>

²⁵ <https://r2e2.am/am/2017/02/02/dilijan-basic-school-no-2/>



Նկար 11. Շահագործումից հանված լամպեր Դիլիջան քաղաքում

Դիլիջան քաղաքում բացվել է արևային էներգիայով սնուցվող հանրային տրանսպորտի առաջին կանգառը: Կանգառում ստեղծվել է դրանից սնվող անվճար լիցքավորման հնարավորություն համայնքի բնակիչների համար²⁶: Սակայն կանգառում արևային էներգետիկայով սնուցվող համակարգը չի աշխատում:

Իրականացվում է թվով 11 բազմաբնակարան շենքերի վերանորոգում և էներգաարդյունավետ արդիականացման ծրագիր:

Դիլիջան համայնքի 2022-2027թթ. հնգամյա զարգացման ծրագրով նախատեսվում է համայնքի ՀՈԱԿ-ներում՝ մարզադպրոց, երաժշտական դպրոց, Երկրագիտական թանգարան, Թեղուտի ակումբի շենք, թիվ 1, 2, 3 մանկապարտեզներ, Հաղարծինի մանկապարտեզ, արևային ֆոտովոլտային կայանների կառուցում:

Եղեգիս համայնք

ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի, Վիվասել MTS-ի, Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի աջակցությամբ սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում 2018-2022 թթ. իրականացվել է Շատին, Սալլի, Հորս, Արտաբույնք, Գողթանիկ, Եղեգիս, Հերմոն, Աղնջաձոր, Թառաթումբ գյուղերի արտաքին լուսավորության ցանցի անցկացումը: 2023թ. մի քանի գյուղերի առկա ցանցում լրամշակումներ կատարելուց հետո կամբողջանա համայնքի լուսավորության համակարգը: Նախատեսվում է ՀՀ կառավարության և Եղեգիսի համայնքապետարանի միջոցներով 2023թ. ավարտին հասցնել փողոցային լուսավորությունը, որը կարժենա 35 մլն դրամ:

WWF-Հայաստանի կողմից իրականացվող «Հայաստանի կենդանի լանդշաֆտները շուկայի զարգացման համար» ծրագրի աջակցությամբ Եղեգիս համայնքում տեղադրվել է 40 կիլովատ հզորությամբ արևային կայան, որի արտադրած էլեկտրաէներգիայի շնորհիվ խնայված գումարները կօգտագործվեն արջերի կողմից գյուղացիների հասցված վնասի փոխհատուցման նպատակով: Ստացիոնար կայանից բացի համայնքը

²⁶<https://www.facebook.com/MunicipalityOfDilijan/posts/2241919682691524/?paipv=0&eav=Afb9UYIgyZB8Ikhhiv4wLC45AxYdygceIRDbyML0bUhWn1nALnUda5IR>

ստացել է ևս 5 հատ 2 կիլովատ հզորությամբ շարժական հիբրիդային արևային կայան, որոնք ըստ անհրաժեշտության կօգտագործվեն համայնքում և հեռագնա արոտներում:



Նկար 12. Արևային կայանի տեղադրում Եղեգիս համայնքում

Փամբակ համայնք

Փամբակ համայնքի 11 բնակավայրում տեղադրված է 54 արևային պանելային համակարգ, 9 բնակավայրում՝ 105 արևային ջրատաքացուցիչ: Բնակավայրերում տեղադրվել է 417 ԼԷԴ լամպ, որից 80-ը փոխարինել են հին լամպերին, մնացածը նոր լուսավորության համակարգերի անցկացման արդյունքում են տեղադրվել:

ՀՀ կառավարության 2022թ. դեկտեմբերի 31-ի N 1853-Ն որոշմամբ Փամբակ համայնքին հատկացվել է 6 միլիոն 980 հազար դրամ՝ «Եղեգնուտ և Լեռնաջուր բնակավայրերի լուսավորության համակարգերի կառուցում և նորոգում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրմամբ» ծրագրի համար:

Եղեգնուտ և Լեռնաջուր բնակավայրերում նախատեսվում է ստեղծել գիշերային լուսավորության համակարգ, ձորագետում ամրացնել համայնքային նշանակության շինությունը և կապիտալ նորոգել շենքի տանիքը:

Սուբվենցիոն ծրագրերով 2023թ. նախատեսված են հետևյալ միջոցառումները

Եղեգիս համայնք

- Եղեգիս համայնքի Շատին, Աղնջաձոր, Թառաթումբ, Քարազլուխ և Արտաբույնք բնակավայրերի փողոցային լուսավորության ցանցի կառուցում

Փամբակ համայնք

- Լեռնապատ բնակավայրի մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցում
- Բազում բնակավայրի նախկին համայնքապետարանի շենքի հիմնանորոգում որպես մշակույթի կենտրոն
- Փամբակ բնակավայրի հանդիսությունների սրահի կառուցում:

Դիլիջան համայնք

- Դիլիջան համայնքի թվով 6 ԲԲՇ-ների տանիքների հիմնանորոգում

Թալին համայնք

- ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Թալին քաղաքի թիվ 2 մանկապարտեզի շենքի վերանորոգման աշխատանքներ

3.2 Ուսումնասիրված համայնքների գնահատում՝ «Արդյունաբերական պրոցեսներ և արտադրանքի օգտագործում (հանքային արդյունաբերություն և F-գազեր)» ոլորտ

ՀՀ ջերմոցային գազերի ազգային կադաստրի 1990-2019թթ. հաշվետվության համաձայն՝ «Արդյունաբերական պրոցեսներ և արտադրանքի օգտագործում» ոլորտում ջերմոցային գազերն ավելացել են 2010թ. 588.6 Գգ CO₂ համ համեմատ 2019թ-ին հասնելով 1285.3 Գգ CO₂ համ:

Ուսումնասիրված համայնքներից երեքում՝ Թալինում, Փամբակում և Դիլիջանում շահագործվում են մետաղական, ոչ մետաղական և ածխաթթվային ջրերի հանքեր, որոնց շահագործումը հանգեցնում է հողերի վիճակի վատթարացման, լանդշաֆտների խախտման, կենսաբազմազանության փոփոխության, անտառահատումների, մակերևութային և ստորերկրյա ջրերի հոսքերի նվազման և աղտոտման, մթնոլորտային օդ վնասակար նյութերի արտանետումների՝ նպաստելով ջերմոցային գազերի արտանետումների ծավալի աճին:

Թալին խոշորացված համայնքում շահագործվում է 25 ոչ մետաղական՝ հիմնականում տուֆի հանք, որոնց զբաղեցրած ընդհանուր մակերեսը կազմում է 160,581 հա: Ընդերքօգտագործման իրավունքները երկարաժամկետ են և ունեն երկարաձգման հնարավորություն:

Հանքերի ռեկուլտիվացիան ՀՀ օրենսդրությամբ նախատեսվում է հանքերի շահագործման ավարտից հետո: Մինչ ռեկուլտիվացումը հողերի վիճակը վատթարանում է, ենթարկվում է շարունակական դեգրադացման՝ նպաստելով ՋԳ-երի արտանետումների, անապատացման գործընթացների արագացման: Չնայած ՀՀ հողային, ընդերքի մասին օրենսգրքերով և ընդերքօգտագործման պայմանագրերով նախատեսված են հողերի պահպանության և աղտոտման կանխարգելմանն ու հանքերի ռեկուլտիվացմանն ուղղված դրույթներ, այնուամենայնիվ, գործնականում դրանք չեն կատարվում:

Ռեկուլտիվացման համար ստեղծված է ընդերքօգտագործողների կողմից շրջակա միջավայրի պահպանության դրամագլուխ, որտեղ կուտակվում են ընդերքօգտագործողների կողմից հանքավայրերի ռեկուլտիվացման համար նախատեսված գումարներն ընդերքօգտագործողի կողմից ռեկուլտիվացիա չիրականացնելու պարագայում լիազոր մարմնի կողմից այդ աշխատանքների իրականացման համար:

Թալինում հանքեր շահագործող 25 ընկերություններից միայն 13 են ընդերքօգտագործման պայմանագրերով ազդակիր համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանն օժանդակելու պարտավորություններ ստանձնել տարեկան 4 միլիոն 755 հազար դրամի չափով:

Փամբակ համայնքի վարչական տարածքում շահագործվում է 2 մետաղական և 2 ոչ մետաղական հանք: Նոր հանքավայրերի երկրաբանական հետազոտություններ են ընթանում են ընդերքի մի շարք տեղամասերում:



Նկար 13. Քարաբերդի ոսկու հանքավայր Փամբակ համայնքի Քարաբերդ բնակավայրի տարածքում

Մետաղական հանքերը շահագործվում են մեծ ընդմիջումներով՝ դեգրադացնելով հողը և աղտոտելով մակերևութային և ստորերկրյա ջրերը: Այդ հանքարդյունաբերողները չեն վճարել ռոյալթի: Համայնքը գրկված է ռոյալթիներից գումարներ ստանալու և դրանք կառավարության սահմանված ուղղություններով, այդ թվում կլիմայի հարմարվողականության ծրագրերի իրականացման համար օգտագործելու հնարավորությունից:

Համայնքի վարչական տարածքի ոչ մետաղական հանքավայրեր շահագործող ընկերությունների ընդերքօգտագործման պայմանագրերով համայնքին սոցիալական օժանդակություն ցուցաբերելու պարտավորություններ չեն ներառվել:

Դիլիջան համայնքի տարածքում շահագործվում է 2 ածխաթթվային ստորերկրյա հանքային ջրերի հանքավայր և Հովքի ավազակոպիճային հանքը: Ընկերությունների ընդերքօգտագործման պայմանագրերով համայնքին սոցիալական օժանդակություն ցուցաբերելու պարտավորություններ չեն ներառվել: Ածխաթթվային հանքային ջրի հանքավայրերի շահագործումն ուղեկցվում է CO₂-ի արտանետմամբ, ինչը կլիմայի փոփոխության տեսանկյունից ենթակա է հաշվարկման:

Եղեգիս համայնքի Վարդահովիտ բնակավայրում իրականացվում է Վարդենիսի բազմամետաղների հանքերևակման տեղամասում երկրաբանական աշխատանքների ծրագիրը: Խախտվել է մեծ քանակությամբ հողային ռեսուրս՝ մեծամասամբ ալպիական մարգագետիններ: Տարածքը նաև վայրի կենդանիների էկոմիջանցք է: Ըստ տեղաբնակների՝ Վարդենիսի բազմամետաղների հանքերևակման ծրագիրը բացասական ազդեցություն կունենա ջրի աղբյուրների վրա:



Նկար 14. Եղեգիս համայնքի Վարդահովիտ բնակավայրի մարզագետիներում բացված ճանապարհ

3.3 Ուսումնասիրված համայնքների գնահատում՝ «Թափոններ (կոշտ թափոնների կառավարում, կեղտաջրեր)» ոլորտ

ՀՀ ջերմոցային գազերի ազդային կադաստրի 1990-2019թթ. հաշվետվության համաձայն՝ «Թափոններ» ոլորտում CO₂-ի արտանետումներն ավելացել են 2010թ. 567.2 Գգ CO₂ համ համեմատ 2019թ-ին հասնելով 628.7 Գգ CO₂ համ:

Ուսումնասիրված համայնքներում մասնակի է լուծված աղբահանության խնդիրը: Սակայն աղբի կառավարման խնդիրը լիարժեք լուծված չէ, չկան կառավարելի և օրինական աղբավայրեր, համայնքների տարածքներում ձևավորվում են աղբակույտեր: Լուծված չեն կոյուղաջրերի մաքրման և կառավարման խնդիրները: Համայնքների տարածքի մակերևութային ջրհոսքերն աղտոտվում են ինչպես կոշտ կենցաղային թափոններով, այնպես էլ կոյուղաջրերով:

ՏԻՄ-երը «Թափոնների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով լիազորություն չունեն շահագործելու աղբավայրերը: Նույն օրենքով ՏԻՄ-ի համար սահմանված լիազորությունները բավարար չեն թափոնների կառավարումը լիարժեք կազմակերպելու և վերահսկելու համար: «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով թափոնների գործածության ոլորտում ՏԻՄ-երի իրավասություններն են.

- ա) հսկողություն աղբահանման նկատմամբ
- բ) տարածքների սանիտարական մաքրման սխեմաների կազմում
- գ) չհսկվող և չարտոնագրված աղբավայրերի վերացում
- դ) ռեսուրսային արժեք ունեցող ոչ վտանգավոր թափոնների հավաքման գործընթացին բնակչության մասնակցության կազմակերպում
- ե) համայնքում սպառման թափոնների տեսակավորված հավաքման համակարգի ներդրմանն աջակցություն:

Թալին համայնք՝ թափոն

Թալին համայնքն ունի 5 աղբավայր: Թալինում տարեկան առաջանում է 5493 տոննա կոշտ կենցաղային թափոն՝ համաձայն Հայաստանում ընդունված միջին ցուցանիշի հաշվարկի: Ըստ ՀՀ ՇՄՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն»

ՊՈԱԿ-ի՝ Թալին քաղաքի աղբավայրում տարեկան տեղադրվում է 110-120տ կենցաղային թափոն²⁷:

Ըստ Թալինի «Կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի՝ Թալին քաղաքի աղբավայրում օրական տեղադրվում է մոտ 2 տոննա աղբ, Արագածի աղբավայրում Թալինի աղբավայրի օրական ծավալի շուրջ 30%-ի չափով, մյուս բնակավայրերի աղբավայրերում՝ շաբաթական 30%-ի չափով: Ստացվում է, որ տարեկան Թալին քաղաքի աղբավայրում տեղադրվում է 538 տոննա թափոն: ՊՈԱԿ-ի տվյալները մոտ 5 անգամ պակաս են Թալինի «Կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի տրամադրած տվյալից: «ԷկոԼուր»-ի թիմի այցելության ժամանակ արձանագրեցինք, որ Թալին քաղաքի աղբավայրը ցանկապատված չէր, չունեի պահակակետ, մայրուղուց սկսվող աղբավայրի ճանապարհի երկայնքով աղբակույտեր էին: Աղբն ինքնայրվում էր:



Նկար 16. Թալինի քաղաքային աղբավայր

Բացի կոշտ կենցաղային թափոններից համայնքում սպասվում է էլեկտրոնային թափոնների կուտակում՝ հաշվի առնելով արևային էներգետիկայի զարգացման միտումները: Արևային կայանների կառուցման ծրագրերում չեն նախատեսվել հստակ տարածքներ այդ կայանների շահագործման արդյունքում գոյացող էլեկտրոնային թափոնների տեղադրման համար: Օրինակ, միայն «Այգ 1» կայանի համար նախատեսված է 450 000 վահանակի տեղադրում: Նշված կայանների շահագործման ավարտին նույնպես անհրաժեշտ կլինեն լրացուցիչ հողատեսքեր՝ այդ կայանների շահագործումից հետո աշխատած և վնասված արևային ֆոտովոլտային վահանակների տեղադրման համար՝ մինչև ՀՀ-ում դրանց օգտահանման, չեզոքացման, պահման և վնասագերծման համապատասխան նորմատիվ բազաների ստեղծումը և համապատասխան տեխնոլոգիաների ներդրումը:

Փամբակ համայնք՝ թափոն

Փամբակ համայնքում տարեկան առաջանում է մոտ 1900 տոննա կոշտ կենցաղային թափոն՝ համաձայն Հայաստանում ընդունված միջին ցուցանիշի հաշվարկի:

Համայնքն աղբը տեղադրում է Արջուտ գյուղում տեղակայված Վանաձոր քաղաքի 6,5 հա տարածքով աղբավայրում, որն արդեն գործում է 50 տարի: Այն կառավարելի և սանիտարական չափորոշիչներին համապատասխանող աղբավայր չէ: Փամբակ

²⁷ <http://meteomonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekang/tarekan/Tarekan%202021.pdf>

համայնքի բնակավայրերից միայն Մարգահովիտն է աղբը տեղափոխում Հաղարծինի աղբավայր:

Ըստ ՇՄՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքի՝ միայն Վանաձորի բնակչությունը (80000 մարդ) տարեկան գոյացնում է մոտ 25000 տոննա աղբ, աղբավայրը չունի պարիսպ, պահակակետ, ջրամատակարարում, էլեկտրամատակարարում: Աղբավայրում կատարվում են հողածածկման աշխատանքներ հարկ եղած ժամանակ վարձու տեխնիկայի կիրառմամբ: Աղբավայրում առկա են բազմաթիվ այրման օջախներ, ինչպես նաև նախկինում այրման հետքեր: Այրումից մթնոլորտ են արտանետվում ածխաթթու և շմոլ գազեր, ազոտի օքսիդներ, դիօքսիդներ: Աղտոտվածության պատճառով Արջուտ գյուղի մոտ 20 հա վարելահողեր չեն մշակվում:

Աղբավայրի հարակից տարածքներում հայտնաբերվել են ԴԴՏ-ի իզոմերների կոնցենտրացիաներ: ՀՔՑՀ-ներ հայտնաբերվել են հողի բոլոր (100%) նմուշներում, իսկ ՀՔԷ-Ա-ի դեպքում այդ ցուցանիշը եղել է մոտ է 85%: Ոչ դիօքսիանանման ՊՔԲ-ների գումարային կոնցենտրացիաները հողի նմուշներում շատ դեպքերում գերազանցում են ՍԹԿ-ն 1.04-50 անգամ: Ոչ դիօքսիանանման ՊՔԲ-ների կոնցենտրացիաները հողի նմուշներում գերազանցում են դիօքսիանանման ՊՔԲ-ների կոնցենտրացիաները 8.5-71.7 անգամ:

Ոչ լիարժեք և ոչ կանոնակարգված աղբահանության հետևանքով բնակավայրերին կից տարածքներում, ձորակներում ձևավորվել են ինքնակամ աղբակույտեր, որոնք հողի և ջրի աղտոտման անկառավարելի աղբյուրներ են: Դրանց համար որևէ մարմին պատասխանատվություն չի կրում, և դրանք չեն հաշվառվում ջերմոցային գազերի արտանետման տեսանկյունից:

Փամբակ համայնքի 2023թ. բյուջեի ծախսային մասով կոմունալ ծառայության համար նախատեսված է ընդամենը 300,0 հազար դրամ: Համայնքի 2022-2026թթ. զարգացման ծրագրով նախատեսված է 222 300,0 հազար դրամ արժեքով «Փամբակ համայնքի կոմունալ ծառայության հիմնում և զարգացում» ծրագիրը, ինչի իրագործման արդյունքում աղբահանության խնդիրը մասնակիորեն կլուծվի: Այս ծրագիրը ներկայացվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ՝ 160.3 միլիոն դրամ բյուջեով: Ծրագրով նախատեսվում է ձեռք բերել 1 տրակտոր, 2 աղբատար, 1 բեռնատար մեքենա և 50 աղբաման:

ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 49 արձանագրային որոշման 11-րդ կետով հավանության է արժանացել Լոռու մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման հայեցակարգը, համաձայն որի նախատեսվում է ամբողջ մարզի և Տավուշի մարզի Դիլիջան համայնքի համար ստեղծել եվրոպական չափանիշներին համապատասխան աղբավայր, որը կկառավարվի նախատեսվող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից:

Եղեգիս համայնք՝ թափոն

Եղեգիս համայնքում տարեկան առաջանում է 923 տոննա կոշտ կենցաղային թափոն՝ համաձայն Հայաստանում ընդունված միջին ցուցանիշի հաշվարկի: Համայնքի աղբը տեղակայում է Եղեգնաձոր քաղաքի աղբավայրում: Եղեգիսի ավագանու 2022թ. հուլիսի

15-ի 85Ա որոշման²⁸ համաձայն՝ շաբաթվա կտրվածքով համայնքից աղբավայր է տեղափոխվում մոտ 14 խմ աղբ:

Ըստ ՇՄՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքի²⁹՝ աղբավայրը տեղակայված է Եղեգնաձորից 5-10 կմ հեռավորության վրա և զբաղեցնում է 1.7 հա տարածք: Այն գործում է 1961 թ-ից: Աղբավայրում տարեկան տեղադրվում է մոտ 1100 տոննա աղբ: Աղբավայրը չունի պարսպապատում, պահակակետ, ջրամատակարարում և էլեկտրամատակարարում: Աղբավայրում իրականացվում են հողածածկման աշխատանքներ հարկ եղած ժամանակ: Աղբավայրի տարածքում առկա են բազմաթիվ այրման օջախներ և նախկինում այրման հետքեր: Աղբավայրում չեն իրականացվում հակահրդեհային կանխարգելիչ աշխատանքներ:

Համաձայն Եղեգիսի 2023-2027թթ. զարգացման ծրագրի՝ աղբը համայնքի բնակավայրերում թափվում է նաև բնակավայրերին մոտիկ ձորակներում՝ տարերայնորեն, ճանապարհներից ոչ հեռու տարածքներում, որը կործանարար է շրջակա միջավայրի, հարակից պտղատու այգիների և ընտանի կենդանիների համար:

Ինքնակամ աղբակույտերից արտանետվող ջերմոցային գազերը չեն ներառվում ջերմոցային գազերի կադաստրում:

Դիլիջան համայնք՝ թափոն

Դիլիջան համայնքում տարեկան առաջանում է 3898 տոննա կոշտ կենցաղային թափոն՝ համաձայն Հայաստանում ընդունված միջին ցուցանիշի հաշվարկի: Մինչդեռ, ըստ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի աղբահանության և կոշտ կենցաղային թափոնների 2022-2026թթ. կառավարման պլանի, աղբավայրում տարեկան կուտակվում է 17733 խմ կենցաղային թափոն: Դիլիջան համայնքի աղբավայրը գտնվում է քաղաքից 12-13 կմ հեռավորության վրա՝ Հաղարծին բնակավայրում, զբաղեցնում է 32.77 հա տարածք:³⁰ Այն շահագործվում է 1999 թվականից: Դիլիջան համայնքի ավագանու որոշմամբ հաստատվել է համայնքի տարածքում աղբահանության կազմակերպման հայեցակարգը³¹, ինչպես նաև աղբահանության իրականացման սանիտարական սխեման:

ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 49 արձանագրային որոշման³² 11-րդ կետով հավանության է արժանացել Լոռու մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման հայեցակարգը, համաձայն որի նախատեսվում է ամբողջ մարզի և Տավուշի մարզի Դիլիջան համայնքի համար ստեղծել Եվրոպական չափանիշներին համապատասխան աղբավայր:

«Դիլիջան համայնքի կոմունալ սպասարկում և լուսավորություն» ՀՈԱԿ-ը կատարում է հակահրդեհային կանխարգելիչ աշխատանքներ հողածածկման տեսքով՝ շաբաթական երկու անգամ: Դիլիջան քաղաքում աղբահանությունն իրականացվում է ամենօրյա հաճախականությամբ կոմունալ ծառայության կողմից՝ աղբատար մեքենաներով:

²⁸ <https://yeghegis.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=3afc282d-b0fa-487f-8096-388144e2806d>

²⁹ <http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekang/tarekan/Annual-19.pdf>

³⁰ <http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekang/tarekan/Tarekan%202021.pdf>

³¹ http://tavush.mtad.am/files/comm_docs/9/697/56131.pdf

³² <https://www.irtek.am/views/act.aspx?aid=92592>

ԷկոԼուրի թիմը տեղազննությամբ պարզեց, որ Հաղարծինի աղբավայրում աղբը տարերայնորեն թափած էր աղբավայր տանող ճանապարհի երկայնքով, այն պարսպապատ չէր, աղբը ինքնայրվում էր, աղբավայրի տարածքում արածում էին ընտանի կենդանիներ: Աղբավայրը օրինակելի և կառավարելի չէ:



Նկար 17. Ընտանի կենդանիներ Հաղարծինի աղբավայրի տարածքում

Համայնքի համար, բացի աղբահանությունից, կարևոր է նաև Աղստև գետի ավազանի՝ աղբով և կոյուղաջրերով աղտոտվածության խնդիրը: Չնայած նրան, որ ԱՄՆ ՄԶԳ, ՄԱԶԾ-ի, «Կոկա-Կոլա» կորպորացիայի Եվրասիայի և Մերձավոր Արևելքի բաժանմունքի և Դիլիջանի քաղաքապետարանի միջոցներով իրականացվել են հոսքաջրերի մաքրման կայանի կառուցման աշխատանքներ Աղստև գետի վրա, առ այսօր հոսքաջրերի մաքրման կայանը չի աշխատում:

3.4 Ուսումնասիրված համայնքների գնահատում՝ «Անտառային տնտեսություն (անտառապատում, անտառների պահպանություն) և այլ հողօգտագործում» ոլորտ

Հայաստանը սակավանտառ երկիր է: Համաձայն 2011 թվականին Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության «Հայաստանում կենսաբազմազանության ինտեգրված կառավարում» ծրագրի կողմից հեռահար զոնդավորման մեթոդով ստացված տվյալների, Հայաստանի անտառածածկի մակերեսը կազմում է 332.332 հեկտար կամ երկրի ընդհանուր տարածքի շուրջ 11.17 %-ը³³:

Ըստ ՀՀ ջերմոցային գազերի ազգային կադաստրի 1990-2019թթ. հաշվետվության³⁴՝ «Անտառային տնտեսություն և այլ հողօգտագործում» սեկտորից ածխածնի երկօքսիդի կուտակման ծավալները նվազել են՝ 2010թ. -550.1 Գգ CO₂ համ-ից 2019թ. հասնելով -373.0 Գգ CO₂ համ-ի, ինչ վկայում է անտառների՝ ջերմոցային գազի կլանման ունակության կտրուկ նվազման մասին:

Հասուն անտառի մեկ հեկտարի վրա տարեկան աճում է 1,5 խմ անտառ: Տարեկան 1,5 խմ աճով անտառը կլանում է 1,8 տոննա CO₂ և այն վերածում է 0,5 տոննա ածխածնային կենսազանգվածի:

³³ <http://www.mnp.am/shrjaka-mijavayr/yndhanur-texekutyunner-antar>

³⁴ <https://drive.google.com/file/d/1zVwXLYeg4ng74sMnzWt4E4jXmxrkVZxv/view?pli=1>

Խիստ կարևոր է կլիմայի փոփոխության հետևանքով անտառների խոցելիության և կլիմայական ռիսկերի գնահատումը, անտառների դիմակայունության և հարմարվողականության բարձրացումը, անտառտնտեսվարման և հողօգտագործման արդյունքում ածխածնի կլանման կարողությունների ավելացումը և անտառային ոլորտից ջերմոցային գազերի արտանետումների կրճատումը:

3.4.1 Ապօրինի անտառահատումներ

Ըստ «Հայաստանի Հանրապետության անտառային քաղաքականությունը, ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագիրը հաստատելու մասին» որոշման նախագծի՝ Հայաստանում 2016-2021թթ. արձանագրվել է 1711 անտառխախտման դեպք, ապօրինի հատվել է ընդհանուր 42 հազար 433 հատ ծառ: Վնասատուներով և հիվանդություններով վարակված անտառածածկ տարածքները կազմել են շուրջ 70 հազար հա, ավիացիոն քիմիական պայքարի աշխատանքները կատարվել են միայն 2016, 2018 և 2021 թվականներին՝ 19 հազար 503 հա անտառածածկ մակերեսների վրա: Բնակչության մեկ շնչի հաշվով անտառածածկ տարածքը կազմում է 0.1 հա, որը բավականին ցածր է ԱՊՀ ցուցանիշից (2,7 հա) և համաշխարհային միջին ցուցանիշից (0,5-0,8 հա): 2016-2021թթ. ընթացքում արձանագրվել են հրդեհների 284 դեպքեր՝ ընդգրկելով 4393 հա ընդհանուր տարածք, այդ թվում՝ 2967 հա անտառածածկ տարածքներ: Վառելափայտի ընդհանուր սպառման տարեկան ծավալները երկրում, համաձայն տարբեր փորձագիտական ուսումնասիրությունների, գերազանցում են անտառի բնափայտի տարեկան ընդհանուր աճին:

Միայն 2020-2022թթ. ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից հայտնաբերվել է 50858 հատ ապօրինի՝ մինչև աճի դադարեցման աստիճանը հատված ծառ և 5446 խմ փայտանյութ: Սա ցայց է տալիս, որ ապօրինի անտառահատումների տվյալները հստակ չեն և չեն արտացոլում ապօրինի անտառահատումների իրական ծավալները:

Ըստ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ 2022թ դեկտեմբերի 31-ի դրությամբ անտառային հողերում բռնկվել է 27 հրդեհ և այրվել է շուրջ 251.7424 հա տարածք՝ որից անտառածածկ 199.2364 հա: Անտառային հրդեհները բացասական ազդեցություն ունեն ՋԳ-երի արտաներտման տեսանկյունից:

Հայաստանի անտառների կրճատումը հանգեցրել է.

- անտառային էկոհամակարգի ոչնչացման
- բարձրարժեք տեսակների առավել ցածրարժեքներով փոխարինման
- կլիմայի փոփոխությանը
- թթվածնի պաշարի նվազման
- անտառների և հողերի դեգրադացիայի, երկրի շուրջ 80 % -ի անապատացման նպաստմանը
- էկոհամակարգերի ջրակարգավորիչ ֆունկցիաների կորստի
- աղբուրների, վտակների, փոքր լճակների, ջրաճահճային այլ տարածքների չորացման

- կենդանիների ապրելավայրերի և բույսերի աճելավայրերի վատթարացմանը և կորստին
- կենսաբազմազանության նվազմանը
- անտառներում անցանկալի քանակական և որակական փոփոխությունների
- սողանքային ու սելավային էրոզիոն պրոցեսների ակտիվացման
- սոցիալական, տնտեսական, դեմոգրաֆիական և մարդու առողջության լուրջ խնդիրների:

3.4.2 Անտառվերականգնում

Հայաստանի անտառների պահպանման և վերականգնման խնդիրների լուծման համար ՀՀ կառավարությունն ընդունել է մի շարք իրավական նորմեր: Անտառաձածկի ավելացման պարտավորություն Հայաստանը ստանձնել է նաև Կլիմայի փոփոխության ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի Փարիզյան համաձայնագրի շրջանակներում՝ ՀՀ կառավարության 2015թ. սեպտեմբերի 10-ի N 41 արձանագրային որոշմամբ³⁵ պարտավորվել է մինչև 2050թ-ը անտառաձածկի ավելացում մինչև 20,1%-ի, ինչի համար անտառաձածկ տարածքները պետք է ընդլայնվեն շուրջ 266,5 հազար հեկտարով: Այս ցուցանիշի համար հիմք է հանդիսացել ԿՓՇԿ Հայաստանի Հանրապետության առաջին գեկույցը³⁶ և ՀՀ կառավարության 2005 թ. հուլիսի 21-ի N 1232-Ն որոշումը³⁷:

ՀՀ կառավարության 2021թ. ապրիլի 22-ի N 610 - Լ որոշմամբ³⁸ մինչև 2030 թվականը անտառաձածկը պետք է հասցվի մինչև 12.9 տոկոսի, ինչի համար անհրաժեշտ կլինի տնկել 50 հազար հա անտառ:

Պետական լիազոր մարմինների տեղական և միջազգային կազմակերպությունների կողմից և օժանդակությամբ իրականացվում են անտառվերականգնման աշխատանքներ, սակայն դեռևս գոյություն չունի ճանապարհային քարտեզ, որը կկանոնակարգի Հայաստանի սահմանած թիրախներին հասնելու հանձնառությունը:

2022թ. «Հայաստան» ՊՈԱԿ-ի կողմից պետական բյուջեով ընդհանուր 248 հա-ի վրա իրականացվել են անտառվերականգնման աշխատանքներ, որից 171.3 հա անտառային մշակույթների տնկում և ցանք, և 77.0 հա-ի վրա կոճղաշիվային վերաճին օժանդակման միջոցառումներ, աճեցվել է 250000 հատ սերմնաբուսակ:

Դիլիջան համայնք՝ անտառ

Դիլիջանի անտառները հատուկ պահպանվող տարածքներ են «Դիլիջան» ազգային պարկի տարածքում:

³⁵ <https://www.e-gov.am/protocols/item/544/>

³⁶ <http://env.am/storage/files/first-national-report-resume-arm.pdf>

³⁷ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=14277>

³⁸ <https://www.e-gov.am/gov-decrees/item/36064/>



Նկար 18. «Դիլիջան» ազգային պարկ

Չնայած պահպանության խիստ ռեժիմին՝ «Դիլիջան» ազգային պարկում կատարվում են ապօրինի անտառահատումներ, որոնք ոչնչացնում են ազգային պարկի կենսաբազմազանությունը և ընդհանուր անտառային էկոհամակարգը: Համայնքը գազաֆիկացված է, այնուամենայնիվ, բնակչության որոշակի հատված կենցաղում օգտագործում է վառելափայտ: Ըստ «Դիլիջան» ազգային պարկի 2017-2026 թվականների կառավարման պլանի միջոցառումների ծրագրի՝ տեղի բնակչությունը վառելափայտը պատմականորեն ձեռք է բերել ազգային պարկի տարածքից, և վառելափայտի օգտագործման ծավալը յուրաքանչյուր տնային տնտեսության կողմից տարեկան կազմում է 10խմ-30խմ:

Պահանջվող վառելափայտի ծավալն ավելին է օրինական առաջարկվող վառելափայտի և թափուկի ծավալից:

«Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ում միայն 2022թ. հայտնաբերվել է սաղարթի փոփոխության 29 օջախ ³⁹, ապօրինի անտառահատումների 8 տարածք: ⁴⁰ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բռնկվել է 6 հրդեհ և այրվել է 168.61 հա այլ բուսածածկ տարածք: «Դիլիջան» ազգային պարկ ՊՈԱԿ-ում գարնանային և աշնանային ստուգումների արդյունքում հայտնաբերվել են ընդհանուր թվով 146 հատ ապօրինի հատված ծառերի կոճղեր՝ 234.14խմ ծավալով, որոնց բոլորի համար կազմվել են անտառխախտման արձանագրություններ:

«Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Դիլիջան տեղամասի 8-րդ քառակուսում «Իմ անտառ Հայաստան» ՀԿ-ի կողմից իրականացվել են անտառվերականգման աշխատանքներ՝ 20 հա տարածքի ցանկապատում, 8 հա ցանք և 2 հա հարթակների կառուցում:

Համայնքի բնակավայրերում գործում են փայտամշակման ձեռնարկություններ: Ըստ Դիլիջանի ՏԻՄ-ի ներկայացուցչի՝ հումքը ներկրվում է դրսից: Սակայն չի բացառվում, որ հումքի մի մասը կարող է լինել նաև «Դիլիջան» ազգային պարկի անտառանյութը:

Փամբակ համայնք՝ անտառ

³⁹ <http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekang/tarekan/annual-2022-1.pdf>

⁴⁰ <http://meteomonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekang/tarekan/annual-2022-1.pdf>

Փամբակ համայնքը գտնվում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Վանաձորի մասնաճյուղի (նախկին Գուգարքի և Եղեգնուտի մասնաճյուղերի) տարածքում, որի անտառապատ տարածքները կազմում են 3179,2 և 11826,8 հա⁴¹:



Նկար 19. Գուգարքի անտառներ

Համայնքը գազաֆիկացված է: Սակայն բնակչության գերակշիռ մասը կենցաղում օգտագործում է վառելափայտ: Փամբակ համայնքի բնակիչները հանդիպումների ժամանակ նշեցին, որ անտառում թափուկ չլինելու պատճառով իրենց տրամադրվում է 3 խմ թափուկ, ինչը խիստ անբավարար է իրենց կարիքները հոգալու համար:

ՀՀ ՇՄՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի համաձայն՝ 2022թ. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Վանաձորի մասնաճյուղում հայտնաբերվել է ապօրինի հատումների 17, սաղարթի փոփոխության 267 օջախ, իսկ ընդհանուր Լոռու մարզում անտառի սաղարթի փոփոխության օջախների մակերեսը կազմել է 50 000 հա:

2021թ. ընթացքում Վանաձորի անտառտնտեսության կողմից կազմվել է անտառային հողերում 2021թ. տեղի ունեցած հրդեհների դեպքերի թվով 3 արձանագրություն, անտառածածկ տարածքներում հրդեհված ընդհանուր տարածքի մակերեսը կազմել է 50.8 հա: Դաշտային ուսումնասիրություններ են իրականացվել Փամբակի անտառպետության 10 և 12-րդ քառակուսիների 1, 5, 6, 7, 8, 20, 21 անտառամասերում: Հրդեհի ընդհանուր մակերեսը կազմել է 38 հա⁴²:

2020-2022թթ. ընթացքում պետական բյուջեով և այլ ֆինանսական աղբյուրների միջոցով իրականացված անտառապատման և բնական վերաճի օժանդակման միջոցառումների ուսումնասիրության արդյունքում ՊՈԱԿ-ը պարզել է, որ «Հայանտառ»-ի 13 անտառտնտեսություն մասնաճյուղերում՝ այդ թվում Վանաձորի մասնաճյուղում, առկա են հետևյալ խնդիրները.

- Անտառապատման համար նախատեսված մակերեսների անհամապատասխանությունը իրական չափերին
- Ծառատեսակների ոչ համապատասխան ընտրությունը բնակլիմայական պայմաններին

⁴¹ <http://forestcommittee.am/%d5%af%d5%b8%d5%b4%d5%ab%d5%bf%d5%a5/%d5%b0%d5%a1%d5%b5%d5%a1%d5%b6%d5%bf%d5%a1%d5%bc-%d5%ba%d5%b8%d5%a1%d5%af/d5%b0/d5%a1/d5%b5/d5%a1/d5%b6/d5%bf/d5%a1/d5%bc-%d5%ba/d5%b8/d5%a1/d5%af/d5%a1/d5%b6/d5%bf/d5%a1/d5%bc/d5%a1/d5%b5/d5%ab/d5%b6-%d5%b0/d5%b8/d5%b2/d5%a5/d6%80/>

⁴² <http://meteomonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekanq/tarekan/Tarekan%202021.pdf>

- Ծառատեսակների ցածր կաչողականությունը (միջինը 40%)
- Խնամքի աշխատանքների թերի լինելը
- Ոռոգման համակարգերի բացակայությունը
- Ցանկապատների թերի լինելը:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի 16 անտառտնտեսություն մասնաճյուղերում՝ այդ թվում Վանաձորի մասնաճյուղում, 2022թ. համար հատկացված և շահագործված՝ խնամքի, սանիտարական և այլ նպատակով հատատեղերի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են մի շարք անհամապատասխանություններ և թերություններ:

- Սանիտարական հատման նպատակով ուսումնասիրված հատատեղերում հատման համար նախատեսված ծառերի մի մասն իրենց կենսաբանական ու տնտեսական հատկանիշներով չեն համապատասխանում «Խնամքի և սանիտարական հատումների մասին» կարգի դրույթներին:
- Հատկացված հատատեղերի մի մասը գտնվում էր 30°-ից բարձր թեքությունների վրա, ինչը հետագայում կարող է հանգեցնել էռոզիոն պրոցեսների:
- Ուսումնասիրված հատատեղերի մի մասում առկա են համարակալումներ, որոնք արված են բնի վրա արմատավզիկից վերև, ինչպես նաև մեծ մասաբ անընթեռնելի են, ինչը չի համապատասխանում «Խնամքի և սանիտարական հատումների մասին» կարգի դրույթներին:
- Խնամքի հատման նպատակով ուսումնասիրված հատատեղերում հատման համար նախատեսված ծառերի մի մասը իրենց կենսաբանական ու տնտեսական հատկանիշներով, հասակային դասի սխալ ընտրության, ինչպես նաև ցածր լրիվությամբ պայմանավորված չեն համապատասխանում «Խնամքի և սանիտարական հատումների մասին» կարգի դրույթներին:
- Հատատեղի տոմսերում առկա քառակուսիները և հատամասերը շեղվում են փաստացի դաշտային տվյալներից:
- Որոշ հատատեղերում առկա էին կրկնվող համարներով հատված կոճղեր:

Կլիմայական միջոցառումներ՝ ուղղված Փամբակում անտառածածկ տարածքների ավելացմանը

Վանաձորի անտառտնտեսության մասնաճյուղում 2023թ. ՀՀ պետբյուջեից հատկացված 150 միլիոն դրամով նախատեսված է 470 հա անտառ հիմնել՝ 200 հա բնաշիվային, 270 հա՝ անտառի ցանք և տնկում: Աշխատանքները հիմնականում կատարվում են հատումների հետևանքով առավել տուժած, նաև սողանքավտանգ տարածքներում:⁴³

Մարգահովիտ գյուղում ավապաշտպան անտառաշերտ ունենալու նպատակով⁴⁴ 2020թ. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից տնկվել է 120 հազար ուռենի:

Հայաստանում Ճապոնիայի դեսպանության տրամադրած Մարդկային Անվտանգության «Grassroots» դրամաշնորհային ծրագրի շրջանակում 2023թ. «Իմ անտառ Հայաստան» բնապահպանական ՀԿ-ն նախատեսում է Գուգարքի Բենջամին Գումուշձեան տնկարանի հիմնում, 506 քմ տարածքով անտառային տնկիների ջերմոցի ստեղծում, որը հնարավորություն կտա տարեկան աճեցնել լրացուցիչ 115.200 անտառային

⁴³ <https://armenpress.am/arm/news/489932/>

⁴⁴ <https://www.armeniatree.org/hy/forestation>

ծառատեսակների տնկիներ փակ արմատային համակարգով: Տեղադրվելու է հակակարկտային ցանց տնկարանի 6.600 քմ տարածքի վրա, որի շնորհիվ կբարելավվի տնկարանի արդյունավետությունն ու բաց արմատային համակարգով որակյալ տնկիների ստացումը, քանի որ այն տնկիները, որոնք առավելապես զգայուն են եղանակային պայմանների նկատմամբ, կլինեն պաշտպանված⁴⁵:

Դեբեդ բնակավայրի տարածքում է գտնվում «Իմ անտառ Հայաստան» ՀԿ-ի տնկարանը, այն զբաղեցնում է մոտ 1,5 հա տարածք: Նախատեսվում է այնտեղ աճեցնել 17 ծառատեսակի և 10 տեսակ թփի տնկիներ, որոնք կօգտագործվեն անտառի վերականգնման նախագծերում հիմնականում Լոռիում: Ներկայում 7 մարդ Դեբեդ համայնքից աշխատում են Դեբեդի տնկարանում:

«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամը Միրաք ընտանիքի աջակցությամբ 2005 թ-ին Մարգահովիտ գյուղում հիմնադրել է անտառվերականգնման տնկարան: Այդտեղ բազմացվող բուսակներն ու տնկիները անտառներ ստեղծելու նպատակով տնկվում են Հայաստանի հյուսիսային շրջաններում: Այդտեղ բացմացվող տնկիներն ապահովում են 60% կաշոտման արդյունք: Նույն ընկերությունը 2019 թվականին Մարգահովտում բացել է նոր փորձարարական ջերմոց: Նորակառույց ջերմոցը համալրվել է ծառերի աճեցման համար նախատեսված թաղարներով: Նման եղանակով աճեցվող ծառերն ունեն կաշոտակաության և կենսունակության ավելի բարձր մակարդակ: Ներկայում ջերմոցն ունի շուրջ 30000 տնկի աճեցնելու հնարավորություն, այս տնկարանն ունի 15 աշխատակից:

Մարգահովիտ բնակավայրում ճապոնական «Յակոնիա» հիմնադրամին անհատույց տրամադրել են 10 հա հող, որի վրա աճեցնում են միսկանտուս գիգանտուս բույսը: Այն 3 տարի հետո աճեցնելուց հետո 25 տարի անընդմեջ օգտագործվելու է որպես բրիկետի պատրաստման հումք:



Նկար 20. Միսկանտուս գիգանտուս բույսի աճելավայր Մարգահովիտում

Գյուղում արդեն իսկ կառուցվել է բրիկետի պատրաստման գործարան: Գյուղում բոլոր անապահով ընտանիքներին բրիկետները բաժանվելու են անվճար: Ներդրվելու է բրիկետների վաճառքի զեղչերի համակարգ գյուղի բնակիչների համար: Այս միջոցառումը կնպաստի անտառի վրա ճնշման նվազմանը և կդառնա կենցաղում այլընտրանքային վառելիք:

⁴⁵ <https://myforestarmenia.org/hy/new-greenhouse-in-gugark/>

Եղեգիս համայնք՝ անտառ

Եղեգիս համայնքի որոշակի հատված գտնվում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Վայոց ձորի անտառտնտեսությունն մասնաճյուղի (ընդհանուր տարածքը՝ 15050.96 հա, որից անտառածածկ է 7656,2 հա) Եղեգիսի անտառապետության տարածքում (2445 հա): Այստեղ խնդիրները հիմնականում նույնն են, ինչ «Վանաձորի» մասնաճյուղի դեպքում: Եղեգիս համայնքը գազաֆիկացված չէ: Համայնքը ձմռանն օգտագործում է վառելափայտ և կենսավառելիք: Եղեգիսում հանդիպումների ժամանակ բնակիչները նշեցին, որ իրենց տրամադրվում է մինչև 5 խմ թափուկ, ինչը խիստ անբավարար է ձմռանը ջեռուցում ապահովելու համար:

Թալին համայնք՝ անտառ


Թալին համայնքի անտառային ֆոնդի հողերը կազմում են 1082,09 հա, որը համայնքի ընդհանուր տարածքի շուրջ 1 տոկոսն է: Դրանք հիմնականում անտառածածկ չեն: Հաշվի առնելով համայնքի խիստ կլիմայական պայմանները և խոցելիությունը կլիմայի փոփոխության նկատմամբ՝ համայնքը կարիք ունի անտառածածկ տարածքների, բնակավայրային հողերում ընդհանուր օգտագործման կանաչ գոտիների, այգիների ընդլայնման:

Ըստ Թալինի ՏԻՄ-ի ներկայացուցչի՝ համայնքի միջգյուղական ճանապարհներին վերջին մի քանի տարիների ընթացքում տնկվել է շուրջ 6000 ծառ: ՏԻՄ-ը ձեռք է բերել ջրցան մեքենա: Պետական ծրագրով անտառային շերտ ստեղծելու համար համայնքը տրամադրել է տարածք:

3.5 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների վիճակը Հայաստանում վատթարանում է կլիմայի փոփոխության, ջրային անբավարար հասանելիության և անջրդի հողերի ավելացման, տնտեսական գործունեության, հողերի վերականգնման միջոցառումների բացակայության պատճառով:

Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրի համաձայն՝ Հայաստանի տարածքի 7233 կմ² (24.3 %) գտնվում է անապատացման ռիսկի գոտում, 14519 կմ² (48.8 %) տարածքի վրա (Լոռու և Տավուշի մարզերում 900-1000-ից մինչև 2000-2200 մ, իսկ ներքին շրջաններում 1500-1600-ից մինչև 2800-3000 մ բարձրությունները) անապատացվում են, որն ավելի արագանալու է կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքով: Միայն տարածքի 6742 կմ² (22.6 %)-ի վրա առայժմ անապատացման պրոցեսներն արտահայտված չեն:



Նկար 21. Անապատացման ռիսկի գոտին Հայաստանում՝ ըստ Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրի, 2015թ.

«ԷկոԼուր»-ի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ 4 թիրախ համայնքների համար Հայաստանի Հանրապետության տարածքում անապատացման չափանիշներից բնորոշ են հետևյալ չափանիշները.

- 1) խոնավացման գործակցի նվազեցման միտում
- 2) տեղումների քանակի նվազեցումը
- 3) կենսաբազմազանության նվազում
- 4) գետային հոսքի նվազում
- 5) հողերի վատթարացման (բեղլենդացման) պրոցեսի ակտիվացումը
- 6) հողերի ֆիզիկական, քիմիական և կենսաբանական կազմի վատթարացումը
- 7) սելավաբերության և էրոզիայի աճ
- 8) ցանքատարածությունների արդյունավետության իջեցում և հումուսի նվազում
- 9) մարդածին ներգործության ակտիվացում

Հողերի կայուն կառավարումն ամրագրված է ՀՀ կառավարության 2002թ. մարտի 28-ի N 13 «Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրի մասին» արձանագրային որոշմամբ,⁴⁶ «Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» 2015թ. մայիսի 27-ի N 23 որոշմամբ,⁴⁷ ՀՀ կառավարության 2021թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետությունում հողերի դեգրադացիայի չեզոքացման ծրագիրը հաստատելու մասին» N 725-Լ որոշմամբ: Այս որոշման համաձայն Հայաստանում հողերի դեգրադացիայի չեզոքացմանը հասնելու համար ազգային կամավոր գլոբալ նպատակ է սահմանվել մինչև 2040 թվականը հողում (ստորգետնյա և վերգետնյա հատվածներում) օրգանական ածխածնի պաշարներն ավելացնել 1.5 %-ով՝ 2015 թվականի վիճակի համեմատ⁴⁸:

⁴⁶ <https://www.irtek.am/views/act.aspx?aid=16855>

⁴⁷ http://env.am/storage/files/2015-gac_1.pdf

⁴⁸ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152368>

Այս նպատակին հասնելու համար նախատեսվել են հիմնական գործողություններ, որոնց մեծ մասը համայնքներում չի իրականացվել, մասնավորապես, չի դադարեցվել գյուղատնտեսական մշակովի հողերի դեգրադացիան, չի բարելավվել արոտավայրերի կառավարումը, չի գնահատվել դեգրադացված հողերի մասնաբաժինն ըստ դասերի, չի բացահայտվել հողային ռեսուրսների հիմքում ընկած ներուժի և ինքնավերականգնման աստիճանը, չեն իրականացվել ընդերքօգտագործման արդյունքում խախտված՝ լքված և տիրագուրկ հանքավայրերի տարածքներում հողերի նպատակային վերականգնման ծրագրեր:

Հողերի դեգրադացիայի չեզոքացման ծրագրի իրականացման միջոցառումներից է «Գյուղատնտեսական նշանակության հողերն այլ կատեգորիայի փոխադրման բացառիկ դեպքերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակումը և վարչապետի աշխատակազմ ներկայացնելը մինչև 2021թ. երրորդ եռամսյակը: Նպատակն էր բարձրացնել հողօգտագործման արդյունավետությունը և բացառել գյուղատնտեսական շրջանառությունից հողերի անհիմն դուրսբերումը: ՀՀ կառավարությունը 2021թ. հունիսի 17-ին ընդունել է «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» 987 – Ն որոշումն⁴⁹ առանց «բացառիկ» բառի: Ըստ էության, որոշումը թույլատրում է գյուղատնտեսական նշանակության հողերն այլ նշանակության փոխադրել առանց բացառիկ դեպքերի սահմանման: Այս որոշման հիմնավորման համաձայն՝ 2011-2021թթ. ընթացքում շուրջ 80 հազար հա գյուղատնտեսական նշանակության հողեր փոխադրվել են ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի կատեգորիայի: Ըստ էության, այս որոշումը հակասում է հողերի վերականգնման և անապատացման դեմ պայքարին ուղղված ՀՀ քաղաքականությանը:

4. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ թիրախ համայնքներից ոչ մեկը չունի կլիմայական և կայուն էներգետիկ միջոցառումների պլան իր հնգամյա զարգացման ծրագրերում: Համայնքները պատրաստ չեն լիարժեք մասնակցել կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման ծրագրերին: Չեն մասնակցում էներգետիկ անցման ռազմավարության ձևավորմանը, չեն պաշտպանում իրենց շահերն իրազեկվածության պակասի պատճառով:

Համայնքներին անհրաժեշտ է մշակել կլիմայական և կայուն էներգետիկ միջոցառումների պլան համապատասխան խորհրդատուի օժանդակությամբ, որի իրագործումը կապահովի համայնքների կայուն զարգացում, կլիմայական և էներգետիկայի քաղաքականությունների տեղայնացում:

Կլիմայական և էներգետիկայի հավասարակշռված քաղաքականությունների իրականացման և տեղայնացման, ինչպես նաև քաղաքականություններում սոցիալ-էկոլոգիական բաղադրիչի ներդրման համար անհրաժեշտ են օրենսդրական փոփոխություններ:

Կլիմայի ազդեցությունը

⁴⁹ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=153709>
43

Ուսումնասիրված բոլոր թիրախ համայնքները խոցելի են կլիմայի փոփոխության նկատմամբ: Համայնքների բնակավայրերում նկատվում է բնական ջրադրյունների ցամաքում, շատացել է կարկտահարության, ուժգին քամոտ օրերի և երաշտային տարիների թիվը, հողի դեգրադացիա, մրգերի, մշակովի և վայրի հատապտուղների, կարտոֆիլի, մեղրի բերքատվության անկում: Խոտհարքների և անասնակերի պաշարների նվազման պատճառով ընտանի խոշոր և մանր եղջերավոր անասունների թիվը կրճատվել է, կաթնատվությունը՝ նվազել: Տնային տնտեսությունների եկամուտները կրճատվել են:

Կլիմայի փոփոխությանը դիմակայելու համար խիստ կարևոր է, որպեսզի կատարվի համապատասխան ոլորտային մոնիտորինգ և գնահատում, ինչը հիմք կհանդիսանա համայնքներում համապատասխան ծրագրերի մշակման և իրականացման համար:

Էներգետիկա

Փոքր ՀԷԿ-երն բացասական ազդեցություն են ունեցել թիրախ համայնքների միկրոկլիմայի վրա՝ հյուծելով ջրային ռեսուրսները, չորացնելով գետերի մերձակա բուսականությունը, ոչնչացնելով գետերի կենդանական աշխարհը, նպաստելով մթնոլորտային օդում և հողում խոնավության նվազման: Թիրախ համայնքներում փոքր հիդրոէներգետիկայի զարգացումը չի համապատասխանում կլիմայի փոփոխության ազդեցության մեղման և հարմարվողականության ծրագրերին: Փոքր ՀԷԿ-եր շահագործող ընկերությունները չեն աջակցում համայնքների սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Արևային էներգետիկայի զարգացման հաշվին կրճատվել է գյուղատնտեսական նշանակության հողերի քանակը, կրճատվել է համայնքի գյուղատնտեսության տեսակարար կշիռը: Առաջացել են էլեկտրոնային թափոնների կառավարման ռիսկեր, միջբնակավայրային, ինչպես նաև բիզնեսի հետ շահերի բախումներ սոցիալական աջակցության միջոցների բաշխման առնչությամբ:

Էներգետիկ աղքատության կրճատմանն ուղղված պետական խրախուսման մեխանիզմները բավարար չեն: Բնակչության անվճարունակ շերտին այդ մեխանիզմները հասանելի չեն:

Թիրախ համայնքների բնակչությունը համայնքի էներգետիկ անկախության և էներգետիկ աղքատության խնդրի լուծումը տեսնում է համայնքային արևային կայանի կամ հողմակայանի կառուցման և շահագործման մեջ:

Հողմնային էներգետիկայի զարգացման համար դեռևս իրականացվում են ուսումնասիրություններ:

Համայնքներն ունեն ցածր իրազեկվածություն և մասնագետների պակաս՝ ներկայացնելու կլիմայի փոփոխության մեղմմանն ու հարմարվողականության, ինչպես նաև էներգետիկ անցման ուղղված իրենց ծրագրեր: Իրականացվող սուբվենցիոն ծրագրերը բավարար չեն: Մյուս կողմից համայնքային սուղ բյուջեները բավարար չեն նոր նախաձեռնությունների ֆինանսավորման համար:

Ընդերքօգտագործում (արդյունաբերություն)

Ընդերքօգտագործողներն ընդերքօգտագործման պայմանագրերով ստանձնած բնապահպանական միջոցառումները լիարժեք չեն կատարում, մինչդեռ հանքերի շահագործումը երկարաժամկետ է և շարունակաբար ուղեկցվում է շրջակա միջավայրի վիճակի վատթարացմամբ, հողի դեգրադացմամբ, աղտոտմամբ և քայքայմամբ, ինչը նպաստում է ՋԳ-ների արտանետման մեծացմանը: Ընդերքօգտագործողները չունեն պարտավորություններ՝ իրականացնելու միջոցառումներ ՋԳ-ները կրճատելու համար:

Ընդերքօգտագործման պայմանագրերով նախատեսված սոցիալ-տնտեսական զարգացմանն օժանդակելու գումարները բավարար չեն սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացման համար և չեն ներառվում համայնքների զարգացման ծրագրերում:

Ընդերքօգտագործման պայմանագրերում սահմանված չեն դրույթներ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում նվազագույն ներդրումային չափի մասին: Նախատեսված չեն դրույթներ այդ գումարների կուտակման և դրանք հետագայում կլիմայական և կանաչ էներգետիկայի ծրագրերի իրականացման համար:

Պայմանագրերում նախատեսված չեն համայնքային բյուջեի մուտքային և ծախսային մասում այդ գումարների արտացոլման մեխանիզմներ:

Համայնքապետարաններն ընդերքօգտագործման պայմանագրի կողմ չեն և չունեն իրավաբանորեն պարտադիր կամահայտնության հնարավորություն:

Համայնքներում շահագործվող հանքավայրերից մթնոլորտային օդ արտանետվող փոշու, ինչպես նաև տեխնիկական միջոցներից արտազատվող վտանգավոր նյութերի մոնիտորինգ չի իրականացվում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից:

Անտառ

Հայաստանում 2023թ. սեպտեմբերի 19-ից հետո, կապված Լեռնային Ղարաբաղ-Ադրբեջան կոնֆլիկտի հետ, ստեղծվել է լարված և անկանխատեսելի իրավիճակ, որը լուրջ ազդեցություն է ունենում տնտեսական, սոցիալական, ինչպես նաև էկոլոգիական ոլորտների վրա: Ռուսաստանից ստացվող տրանսպորտային էներգակիրներն արդեն սկսել են թանկանալ, և կա էական ռիսկ, որ գների թանկացումը կարող է ազդել մյուս էներգակիրների, այդ թվում վառելիքայտի սակագների վրա:

Էլեկտրաէներգիայի սակագնի բարձրացում սպասվում է՝ հաշվի առնելով, որ ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի կրկնակի երկարաձգման համար ՀՀ կառավարության 2023թ. սեպտեմբերի 14-ի N 1597-Ս որոշմամբ 160 միլիոն ԱՄՆ դոլարի պետական վարկ կվերցվի:

Չնայած ՀՀ կառավարության 2022 թվականի մարտի 24-ի N 398-Լ որոշմամբ ընդունված «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրով»⁵⁰ 54 կետի 4-րդ ենթակետով նախատեսված գյուղական համայնքների համար անտառի նկատմամբ ճնշման նվազեցման միջոցառումներին, այս ուղղությամբ դեռևս չեն տարվել բավարար աշխատանքներ թիրախ համայնքներում:

⁵⁰ https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2022/398_1.pdf

Հաշվի առնելով ներկայիս ճգնաժամային վիճակը՝ անհրաժեշտ է վերանայել էներգետիկայի ոլորտի քաղաքականությունը և միջոցառումները, մշակել ներկա վիճակից բխող կարճաժամկետ և երկարաժամկետ գործողությունների ծրագիր՝ զսպելու անտառի նկատմամբ ճնշման մեծացումը:

Արդեն իսկ անտառի նկատմամբ մարդածին ճնշումը հանգեցրել է սաղաթի փոփոխության, բարձրաժեք ծառատեսակների փոխարինման ցածրաժեք տեսակներով, ծառերի հիվանդությունների, անտառի դեգրադացման: Դա իր հերթին հանգեցրել է անտառի՝ ջերմոցային գազերի կուտակման ունակության կրճատման և կլիմայի փոփոխության ակտիվ դրսևորումների:

Բնակչության շրջանում ցածր է կլիմայի փոփոխության տեսակետից անտառների դերի մասին իրազեկվածության մակարդակը: Բավարար չէ հանրային և պետական վերահսկողությունն անտառային տարածքների նկատմամբ:

Համայնքներում բավարար չեն էժան էներգետիկ տեխնոլոգիաները, որպեսզի համայնքը հրաժարվի հեշտ հասանելի վառելափայտից:

ՀՀ անտառամերձ գյուղերի բնակիչներին ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 27-ի N 1535-Ն որոշման համաձայն⁵¹ անվճար պետք է հատկացվի տարեկան 8 խմ թափուկ: Սակայն անտառը չունի այդքան թափուկ: Մյուս կողմից թափուկն իր հերթին անտառի էկոհամակարգի կայունության կարևոր բաղադրիչ է, և պետք է այն չափավոր օգտագործել:

Համայնքներին մերձակա անտառային տարածքներում տարբեր մասնավոր ընկերությունների և հիմնադրամների, ինչպես նաև պետական մարմինների անտառտնկման և անտառվերականգնման աշխատանքները զուգակցվում են ապօրինի անտառհատումներով, ինչի արդյունքում ընկնում է այդ աշխատանքների արդյունավետությունը և որոշակիորեն խոչընդոտում Փարիզյան համաձայնագրով ՀՀ-ի ստանձնած պարտավորությունների կատարմանը:

Անտառի նկատմամբ ճնշման մեղմման գործիք կարող է լինել համայնքների միացումը Քաղաքապետերի դաշնագրին, ինչ կնպաստի ԿԵԿԳԾ-ով նախանշված ծրագրերի իրականացմանը, որոնցից են.

- «Կայուն գյուղական տնտեսության խթանում»-ը՝ աջակցելու գյուղատնտեսական գործունեությանը, դրանով իսկ նպաստելու անտառների պահպանմանը, անտառի վրա հիմնված էկոհամակարգային ծառայությունների ստեղծմանը
- «Ռեսուրսների արդյունավետ օգտագործում»՝ ներդնելու էներգասպառման նվազեցմանն ուղղված միջոցառումներ, խթանելու վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումը, զարգացնելու էներգետիկ արդյունավետությունը:

Թափոն

Աղբավայրերում տեղադրվող աղբի ենթադրյալ քանակությունը մի քանի անգամ պակաս է իրականում առաջացող աղբի քանակից:

⁵¹ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=71900>

Ջերմոցային գազերի կադաստրում հնարավոր չէ ներառել տարերայնորեն, անկազմակերպ ձևավորված աղբակույտերից կամ աղբավայրերից արտանետված ջերմոցային գազերի քանակական և որակական տվյալները:

Աղբահանության և աղբի կառավարման, տարերայնորեն առաջացած աղբավայրերի և աղբակույտերի չեզոքացման աշխատանքների կազմակերպման համար ՏԻՄ-երը չունեն բավարար ֆինանսական և տեխնիկական միջոցներ: Մասնավոր հատվածի կողմից չկա հետաքրքրվածություն այս ոլորտում բարձրորակ ծառայություններ մատուցելու համար:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքով ՏԻՄ-ն իր լիազորությունների շրջանակներում պատասխանատու է աղբահանության համար, սակայն պատասխանատու չէ իր վարչական տարածքում գտնվող աղբավայրի շահագործման համար:

Աղբի կառավարումը ժամանակակից տեխնոլոգիաներով շարունակում է խնդիր մնալ համայնքների համար:

Հողային ռեսուրսներ

ՀՀ կառավարության 2021թ. մայիսի 6-ի N 725-Լ որոշմամբ սահմանված Հայաստանում հողերի դեգրադացիայի չեզոքացմանը հասնելու համար ազգային կամավոր գլոբալ նպատակին՝ մինչև 2040 թվականը հողում (ստորգետնյա և վերգետնյա հատվածներում) օրգանական ածխածնի պաշարները 1.5 %-ով ավելացնելուն ուղղված հիմնական գործողությունների մեծ մասը համայնքներում չի իրականացվել, մասնավորապես, չի դադարեցվել գյուղատնտեսական մշակովի հողերի դեգրադացիան, չի բարելավվել արոտավայրերի կառավարումը, չի գնահատվել դեգրադացված հողերի մասնաբաժինն ըստ դասերի, չի բացահայտվել հողային ռեսուրսների հիմքում ընկած ներուժի և ինքնավերականգնման աստիճանը, չեն իրականացվել ընդերքօգտագործման արդյունքում խախտված՝ լքված և տիրագուրկ հանքավայրերի տարածքներում հողերի նպատակային վերականգնման ծրագրեր:

2021թ. հունիսի 17-ին 987 – Ն որոշումն⁵² առանց «բացառիկ» բառի: Ըստ էության, որոշումը թույլատրում է գյուղատնտեսական նշանակության հողերն այլ նշանակության փոխադրել առանց բացառիկ դեպքերի սահմանման: Այս որոշման հիմնավորման համաձայն՝ 2011-2021թթ. ընթացքում շուրջ 80 հազար հա գյուղատնտեսական նշանակության հողեր փոխադրվել են ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի կատեգորիայի: Ըստ էության, այս որոշումը հակասում է հողերի վերականգնման և անապատացման դեմ պայքարին ուղղված ՀՀ քաղաքականությանը:

⁵² <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=153709>